ՔԱՐԹԼԻԻ ՄԱՏՅԱՆ

Վրաց, ինչպես նաև հայ ժողովրդի պատմական անցյալը, նրանց փոխառնչություններն ուսումնասիրելու առումով կարևորագույն սկզբնաղբյուրներից է վրացական տարեգրությունների ժողովածուն, որը պատմագիտության մեջ հայտնի է «Քարթլիս ցխովրեբաս («Պատմություն վրաց») վերտառությամբ։ Այս հուշարձանը սկիզբ է առել XII հարյուրամյակում և ընդհուպ մինչև XIX դ. պարբերաբար համալրվել է։ Ժողովածուն պարունակում է 12 հեղինակների տարբեր գործեր։ Ժողովածուի մեջ ընդգրկված արժեքավոր աղբյուրներից է «Քարթլիի մատյանը», որի թարգմանությունը ներկայացվում է ստորև։

«Քարթլիի մատյանը» որպես հավաքական բնույթի պատմական ժամանակագրություն մտել է «Վրաց պատմության» մեջ։ Այնտեղ նկարագրված են ոչ միայն VIII—XI դդ. Վրաստանում տեղի ունեցած իրադարձությունները, այլև պատմվում է վրաց ավատատիրական կազմավորումների առաջացման, առաջնության համար մրցակցության, հայ և վրաց պետական միավորումների բարդ փոխհարաբերությունների, հայ Բագրատունիների թագավորության մասին։ Վրաստանի քաղաքական պատմության ուսումնասիրության համար արժեքավոր սույն հուշարձանը կարևոր է նաև հայ ժողովրդի ու վրացիներին դրկից ժողովուրդների (օսեր, դաղստանցիներ, չեչեններ և այլն) պատմության առանձին դրվագներ ուսումնասիրելու առումով։ Այս հուշարձանից կարելի է տեղեկություններ քաղել նաև VIII—XI դդ. Անդրկովկասի ժողովուրդների փոխհարաբերությունների, նվաճողների դեմ հայ և վրաց ժողովուրդների պայքարի, Կովկասի ժողովուրդների ու օտար նվաճողների առնչությունների մասին։

Սույն թարգմանության համար հիմք է ծառայել Ս. Գ. Ղաուխչիշվիլու հրատարակած «Վրաց պատմության» տեքստը. („ქართლის ცხოვრება", ტექსტი დადგენილი ყველა ძეობთადი ელნაწერის მეხედვით ე: ყაუხჩიშვილის მიერ, ტ: I, თბილისი, 1955, გვ: 249—317) (*հետ այսուհետև՝* ქ:ძ:, I):

Գոյություն ունի «Քարթլիի մատյանի» երեք լրիվ թարգմանություն. ֆրանսերեն՝ M. Brosset, Histoire de la Georgie, SPb., 1849, p. 256—345; *ռուսերեն՝* Матиане Картлиса (перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе), Тб., 1976; Летопись Картли, перевод, введение и примечания Г. В. Цулая, Тб., 1982.

Սույն աղբյուրի մի փոքր հատված թարգմանել է Վ. Դ. Դոնդուան (Хрестоматия по истории СССР, М., 1960, с. 342—354): *Կա նաև առանձին հատվածների թարգմանություն. Լ. Թաղաիշվիլու* (Е. С. Таканшвили, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXVIII, Тифлис, 1900, с. 178—182); *հայերեն՝ Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934,* ი, ნ. აბულაძე, „ქართლის ცხოვრების" გვეი სომხური თარგმანი, ქართულ-სომხური ტექსტები გამოკვლევითა და ლექსიკონით, ტბ., 1953.

Ընթերցողին ներկայացվող սույն թարգմանությունն ամբողջական է, քանի որ ընդգրկում է նաև ընդմիջարկումները, որոնք, չնայած գիտական որոշակի արժեքին, տեղ չեն գտել վերոհիշյալ թարգմանություններում։

Պարզաբանման նպատակով թարգմանիչների արած միջամտությունները (տարեթվեր, տեղանունների հայկական ձևեր, ենթադրվող բառեր և այլն) առնված են փակագծերի մեջ։

Վ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հ. Գ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Քարթլիի թառատունենինգերորդ մթավարները[1], սուրբ վկա Արշիլ[2] արքայի որդիներ՝ Հովհանը և նրա եղբայր Զվանշեր խուրոյանները[3]

Այնուհետև, երբ վախճանվեց սուրբ վկա Արշիլը, մնացին նրա որդիները՝ Հովհանը և Զվանշերը։ Հովհանը գնաց Եգրիս (Եգերք)[4] և իր հետ տարավ

մորն ու երկու քույրերին։ Իսկ Ջվանշերը և նրա (մյուս) երկու քույրերը մնացին Քարթլի ու Կախեթի երկրներում։ Իսկ նրա կրտսեր քույրը գեղեցկադեմ էր։ Եվ նրա գեղեցկության մասին լսել էր խազարների խաքանը. ուղարկեց պատվիրակ և խնդրեց Շուշանին կնության տալ և խոստացավ օգնել (Ջվանշերին) սարակինոսների դեմ։ Երբ ժամանեց խաքանի պատվիրակը, այդ մասին տեղեկացրեց Ջվանշերն իր եղբորը և մորը։ Բայց նրանք չհամաձայնվեցին և ասացին. «Եթե մենք անզոր գտնվենք, ապա բարվոք է, որ մտնենք Հունաստանի հովանավորության ներքո և ապավինենք քրիստոնյաներին, քան թե պղծվի մեր դուստրը հեթանոսներից»։ Եվ Շուշանն էլ այպանեց խազարների արքային։

Երեք տարի անց խաքանն առաքեց սպասալար Բլուչանին[5], որն անցավ Լեկաց աշխարհի ճանապարհով[6] և մտավ Կախեթ, պաշարեց այն բերդը, որտեղ գտնվում էին Ջվանշերը և նրա քույր Շուշանը, և որոշ ժամանակ անց գրավեց այն ու գերեց նրանց, ավերեց Տփղիս քաղաքը, ավերեց Քարթլին և ողջ երկիրն այն[7]։

Եվ երբ գնում էր (Բլուչանը) Դար-ի-Ալանի ճանապարհով[8], օրերից մի օր Շուշանն ասաց իր եղբորը. «Ավելի լավ է ինձ համար մահը, քանզի տերն ինձ արժանի կդարձնի սուրբ կուսանաց, քան թե պղծվեմ հեթանոսներից»։ Եվ նա կրում էր մատանի, հանեց նրա ակը, բունը հպեց շուրթերին և իսկույն մահացավ, որովհետև այդ ակի տակ մահացու թույն կար։

Եկավ Բլուչանը խաքանի մոտ, բերեց Ջվանշերին ու պատմեց նրա քույր Շուշանի մահվան մասին։ Սակայն (խաքանը) զայրացավ (Շուշանի) աճյունը չբերելու համար, որը տեսնել էր տենչում։ Բռնեցին Բլուչանին, պարանը վիզը գցեցին և տվեցին երկու ձիավորների, որոնք պիտի շարժվեին հակառակ ուղղությամբ և դաժանորեն պոկեցին նրա գլուխը (մարմնից)։ Եվ յոթ տարի Ջվանշերն այնտեղ մնաց, որից հետո խաքանը նրան մեծ նվերներով հետ ուղարկեց իր երկիրը[9]։

Սակայն այդ ժամանակվանից սկսվեց նվազել Խոսրովյան մեծ արքաների Թագավորությունը[10]։ Նախ՝ հզորացավ սարակինոսների իշխանությունը և այդ ժամանակվանից այս բովանդակ երկիրը պարբերաբար ենթարկվում էր ասպատակության ու ավերածության։ Երկրորդ՝ Քարթլի երկրում առաջացան բազում մթավարներ ու թշնամացան միմյանց։ Եվ եթե հանդես էր գալիս Վախտանգի[11] շառավիղներից մեկը, որն արժանի էր թագավոր դառնալու, ապա նա նվաստացվում էր սարակինոսների կողմից։ Քանզի նվաճելով Տփղիս քաղաքը, հագարացիներն այն դարձրին իրենց նստավայրը[12]։ Վերցնում էին այս երկրից հարկ, որը կոչվում էր խարաջ։ Աստծո կամքով՝ մեր մեղքերի բազմության պատճառով հզորացավ հագարացիների ազգը։

Եվ տարածվեց անհավատ Մահմեդի քարոզը, ու բազում ժողովուրդներ հետևեցին նրան։ Դրանից հետո հանդես եկան պարսիկները և հասան մինչև Պոնտոս և ամբողջ Կապադովկիան նվաճեցին աստծով։

Եվ այս Ջվանշերը կին բերեց Բագրատունիների տոհմից, Ատրներսեհի դստերը՝ Լատավր անվամբ, և մայրը նրան նախատեց այդ աղջկան կնության առնելու համար։ Քանզի նա հասու չէր նրանց՝ աստծո հայր կոչված Դավիթ մարգարեի շառավիղներից սերած լինելուն։ Սակայն երբ տեսավ իր որդու կնոջը, սիրեց և օրհնություն տվեց։

Եվ երբ հոլովեցին-անցան շատ տարիներ, եկավ հագարացիների ամիրան՝ Խոսրով անունով[13], որն իշխում էր Սոմխեթում, Քարթլիում և Հերեթում (Հայք, Վիրք և Աղվանք երկրներում)։ Սա վերականգնեց Տփղիս քաղաքը, որն ավերել էին խազարները։

Իսկ երբ ուժասպառ եղան հույները, նրանցից զատվեց Լևոն անվամբ ափխազների էրիսթավը[14]՝ Լևոն էրիսթավի եղբորորդին, որին տրված էր Ափխազաց աշխարհն իբրև ժառանգական տիրույթ։ Այս երկրորդ Լևոնը խազարների թագավորի դստեր որդին էր, և նրանց օգնությամբ զատվեց հույներից, նվաճեց Ափխազաց աշխարհն ու Եգրիսը մինչև Լիխի լեռները և իրեն հռչա-

կեռ ափխազաց թագավոր[15], քանի որ վախճանվել էր Հովհան, և ծերացել էր Ջվանշերը։ Եվ հետայնու Ջվանշերը ևս վախճանվեց։

Սակայն Ջվանշերի կենդանության օրոք Ատրներսեհ Բագրատունին փոխանակեց Կղարջքի, Շավշիքի, Աճարայի, Նիգալի, Ասիսփորի (Ասիայ փորի), Արտահանի և Ստորին Տայքի տիրույթների մեկ երրորդը, ինչպես և Վախտանգ թագավորի շառավիղներին պատկանող բերդերը։ Եվ գնաց Ատրներսեհը Կղարջք, որտեղ և մահացավ։

Քանզի նրա հայրը՝ Ներսեհը, Վարազ-Բակուր անտիպատրիկի որդին, և այս Վարազ-Բակուրի հայրը՝ Գվարամ անվամբ կյուրապաղատը՝ Ստեփաննոս Առաջինի որդին և Դեմետրեի եղբայրը, սրանք վախճանվել էին, և այս Ատրներսեհի եղբայրները՝ Փիլիպե և Ստեփաննոս անվամբ, նույնպես մահացել էին։

Քարթլիի քառասունվեցերորդ կյուրապաղատ Ատրներսեհի որդի Աշոտ Բագրատունին

Ատրներսեհի մահից հետո Տերը հզորացրեց Աշոտ[16] կյուրապաղատի թագավորությունը և (նա) տիրեց բովանդակ Քարթլիին[17]։ Քանզի նույն ժամանակ Մասլաման[18] ներխուժել էր Հունաստան, և վերադարձավ ուժասպառ եղած ու նվաստացած։ Այնժամ հունաց արքան կյուրապաղատությունը շնորհեց Աշոտին, և տկարացան սարակինոսները, ու հզորացավ Աշոտ կյուրապաղատը։ Իսկ Տփղիսում սարակինոսներից ոչ ոք չմնաց, բացի Շուարի որդի Ալիից։ Իսկ Գրիգորը[19] իշխում էր Կախեթում։

Այն ժամանակ (երբ) Աշոտ կյուրապաղատն արշավում էր, նրան օգնեց ափխազաց թագավոր Լևոն Երկրորդի որդի Թեոդոսը[20], որը Աշոտ կյուրապաղատի փեսան էր։ Արշավեց Գրիգորը Կախեթից, որին օգնեցին մթիուլները[21], ծանարները[22] և Տփղիսի ամիրան։ Եվ բախվեցին Քսանի[23] գետի ափին Աշոտն ու Գրիգորը։ Փախուստի մատնեցին Գրիգորին՝ Կախեթի մթավարին, և նվաճեցին երկիրը, որը (Գրիգորը) խլել էր Քարթլիից։ Եվ տիրեց Աշոտը Կղարջքից մինչև Քսանի (գետը)։

Դրանից հետո եկավ Եզիդի որդի Խալիլը (ծագումով) Արաբիայից[24] և գրավեց Սոմխեթը, Քարթլին ու Հեբեթը։ Եվ սպանեցին Աշոտ կյուրապաղատին[25] Գարղաբանում (Գարղմանում), եկեղեցու ներսում, ու նրա արյունը, որ այն ժամանակ հեղվեց, այժմ էլ տեսանելի է, կարծես նոր հեղված լինի։

Սակայն նորից տիրեցին սարակինոսները Քարթլիին։ Եվ երբ մեկնեց Խալիլը, որպես ամիրա (Տփղիսում) թողեց Շուարի որդի Ալիին[26]։ Այն ժամանակ դավ նյութեցին գարդաբանցիները և քորեպիսկոպոս հռչակեցին Դաչին[27]՝ Քվաբուլիի որդի Իվանեի որդուն, իսկ նրանից հետո քորեպիսկոպոսության (աթոռին) բազմեցրին Սամվել Դոնաուրիին[28]։ Դարձյալ երկրորդ անգամ եկավ նույն արաբ Խալիլը։ Մարտի բռնվեցին գարդաբանցիները Գավազի[29] մոտ և փախուստի մատնեցին Խալիլին, և նրա զորքից շատերին կոտորեցին։

Նորից Տփղիսի ամիրա դարձավ Իսմայիլի որդի Սահակը[30]։ Երրորդ անգամ եկավ Խալիլը, որին սպանեցին Ջավախքում[31]։ Եվ նրա որդի Մահմեդը եկավ Քարթլի։ Դիմավորեց նրան Աշոտ կյուրապաղատի որդի Բագրատը[32] և շնորհեց նրան Քարթլին։

Քառասունյոթերորդ կյուրապաղատ Բագրատը՝ Աշոտ կյուրապաղատի որդին և Ատրներսեհ ու Գվարամ Բագրատունիների եղբայրը

Իսկ այս Բագրատն իր եղբայրների հետ գրավեց Արտանուջից այն կողմ գտնվող երբեմնի իրենց տիրույթը՝ իրենց հոր հայրենիքը, և հպատակվեց սարակինոսներին։ Իսկ երբ եկավ Մահմեդը Քարթլի ու նրան միացավ Բագրատ կյուրապաղատը, այն ժամանակ արշավանքի ելավ Տփղիսի ամիրա Սահակը զորքով և Ռեխա[33] վայրում բանակ դրեց, իսկ Մահմեդը և Բագրատը գրավեցին Ուփլիսցիխեն[34]։ Եվ եկան գարդարանցի կախերը Սահակին օգ-

նության, բախվեցին Ռեխայի մոտ և տեղի ունեցավ ճակատամարտ նրանց միջև։ Ոչ սրանք դիմեցին փախուստի, ոչ էլ նրանք (նահանջեցին) մինչև իրարից հետ քաշվելը։ Մահմեդը զորքը ժողովեց և գնաց Պարտավ։

Իսկ այս Բագրատը Քրիստոսից հետո 830 թ. հիմնեց և սահմանեց ափխազաց կաթողիկոսությունը։

Մինչև այդ ժամանակ 219 տարի էր անցել Մահմեդի հանդեպ գալուց, որը սկիզբ էր դրել սարակինոսների հավատին։

Այդ ժամանակ Բաղդադից արշավեց[35] թուրք ստրուկ Բուղան[36], որին ուղարկել էր ամիրա Մումնին[37] մեծ զորքով։ Ասպատակեց ողջ Սոմխեթը և գերեց նրանց բոլոր իշխաններին[38]։ Եկավ և պաշարեց Տփղիս քաղաքը, քանի որ չէր հպատակվում ամիրա Սահակը, սպանեց Սահակին, ավերեց Տբղիսը, հրի մատնեց այն և ավերեց նրա ողջ շրջակայքը[39]։

Եվ Թեոդոսը[40], ափխազաց թագավորը, ելավ նրա դեմ և բանակ դրեց Կվևրցխորում։ Իսկ Բուղան իմանալով այդ՝ ուղարկեց իր սպասալար Ջիբաբին և Բագրատին՝ Աշոտ կյուրապաղատի որդուն։ Հարձակվեցին ու փախուստի մատնեցին ափխազներին, և անհամար թվով զոհեր եղան։ Եվ Թեոդոս արքան Դվալեթի ճանապարհով փախավ։

Դարձյալ նահանջողների ճանապարհը կտրեցին գարդաբանցիները Ջվարիս-գվերդիի[41] մոտ, և մեծապես վնասեցին զորքին։ Այդ մասին իմանալով, Բուղան այնտեղից ելավ և եկավ Ճարթալեթ[42], այնտեղ կանգ առավ, պատանդներ վերցրեց մթիուլներից՝ երեք հարյուր մարդ և կամենում էր մտնել Օսեթ ու հասավ մինչև Ցխավատ[43]։ Սակայն հայոց էրիսթավ Աբուլաբասը[44] և Աշոտի որդի Գվարամը[45] նամակով հայտնեցին մթիուլներին, որ չթողնեն (Բուղային) մտնել (իրենց երկիրը)։ Իսկ նրանք (արաբները) սպանեցին (իրենց մոտ եղած) պատանդներին։ Աստված օգնեց, քանզի ձյուն եկավ՝ ճանապարհը կտրելով և (նրանք) հարձակվեցին (արաբների վրա)։ Աստված հաղթանակ պարգևեց, և սպանվեցին բազում սարակինոսներ. և նրանց ձիերը թունավոր խոտ ճարակեցին ու շատերը սատկեցին։ Զորքն այնքան բազմաթիվ էր, որ կորուստը նկատելի չէր, քանզի նրա թիվը հասնում էր մոտ հարյուր քսան հազարի։

Վերադարձավ (Բուղան) և ձմեռեց Պարտավում։ Եվ զնդան նետեց ոմն քահանայի որդու, որն իշխան էր դարձել ու ավնեց Գարդաբանը։ Բացեց Դարբանդի դուռը և դուրս բերեց երեք հարյուր ծուխ խազարներ ու բնակեցրեց նրանց Շամքորում։ Դար-ի-Ալանից դուրս բերեց մոտ հարյուր ծուխ օս և բնակեցրեց Դմանիսում՝ կամենալով ամռանը մուտք գործել Օսեթ (Ալանաց երկիր)։ Իսկ երբ Ամիր-Մումնան տեղեկացավ, որ նա բանակցում է ցեղակից խազարների[46] հետ (հրաման) հղեց Բուղային, որպեսզի Քարթլին թողնի Խալիլի որդուն՝ Հումեդին[47]։ Բուղան հեռացավ, և ամիրա մնաց Հումեդը՝ Խալիլի որդին։ Եվ գահընկեց արեց ամիրան Հումեդին ու կարգեց Հումեդի ազգական Իսե[48] (Հիսե)՝ Շիխի որդուն։

Եվ քորեպիսկոպոս էր Գաբրիել Դոնաուրին[49] Սամուել քորեպիսկոպոսի եղբայրը։ Եվ գնաց Իսեն ու եկավ մի ուրիշ ամիրա՝ Աբրահամը[50]։ Վերստին որպես ամիրա եկավ Խալիլի որդի Հումեդը և ավելի ինքնիշխան տիրեց այդ երկրներին՝ Սոմխեթին, Քարթլիին և Ռանին։

Եվ հեռացավ Խալիլի որդին ու ամիրա դարձավ Սահակի ծառաներից մեկը՝ Գաբուլոց անվամբ[51]։ Իսկ Աշոտ կյուրապաղատի որդի Գվարամը ձերբակալեց Գաբուլոցին և ուղարկեց Հունաստան, քանի որ հզորացել էր Գաբուլոցը և (նրան) հպատակվեցին գարդաբանցիները։

Եվ Աշոտը պայքարում էր իր հորեղբորորդու՝ Գվարամի եղբոր դեմ։ Իսկ Գվարամը գրավել էր Ջավախքը, Թռեղքը, Տաշիրը, Աշոցքը և Արտահանը։ Եվ մարտնչում էր սարակինոսների դեմ. մերթ Գվարամն էր հաղթում, մերթ՝ սարակինոսները։ Իսկ Գվարամը բաժանեց իր եղբայրներ Ատրներսեհի և Բագրատի միջև երկրները և Աշոցքը բաժին հանեց իր կնոջ եղբորը՝ Հայոց արքային։

Այնուհետև մահացավ Ատրներսեհը՝ Գվարամի եղբայրը և Աշոտ կյուրապաղատի որդին։

Մահացավ Բագրատ կյուրապաղատը՝ Ատրներսեհի եղբայրը, քրոնիկոնի 96 թ. (876) և թողեց երեք որդի՝ Դավիթ, Աշոտ և Ատրներսեհ։

Մահացավ Ատրներսեհը քրոնիկոնի 94 թ. (874)։

Մահացավ Աշոտը՝ Ատրներսեհի եղբայրը և Բագրատ կյուրապաղատի որդին քրոնիկոնի 105 թ. (885)։

Այդ ժամանակ ելավ ափխազաց թագավոր Գեորգին[52]՝ Լևոնի որդին, Թեոդոսի և Դեմետրեի եղբայրը, գրավեց Քարթլին և էրիսթավ կարգեց Դեմետրեի որդի Զիխային, և երբ վախճանվեց ափխազաց թագավոր Գեորգին, մնաց Դեմետրեի[53] Բագրատ անվամբ մանկահասակ որդին, որը հայտնի դարձավ արտաքսվելու շնորհիվ։ Եվ Գեորգի արքայի կինը սպանեց Դեմետրեի որդուն՝ էրիսթավ Զիխային։ Նա խաբեց մթավար Իվանե Շավլիանին և ծովը նետեցին Բագրատին։ Բայց աստված փրկեց նրան, ու նա հասավ Կոստանդնուպոլիս քաղաքը։ Եվ արքա Հովհանն իր որդի Ատներսեհին կնության բերեց Աշոտի որդի Գվարամի դստերը։ Մահացավ ափխազաց թագավոր Հովհանը, և նրա փոխարեն թագավորեց որդին՝ Ատներսեհը[54]։ Եվ գրավեց Լիպարիտը[55] Թռեղք երկիրը, շինեց Կլդեկարնի ամրոցը և այն ի տիրություն տվեց Բագրատի որդի Դավթին։

Թեոդոս Երկրորդը մահացավ անժառանգ, և գահ բարձրացավ Գեորգին, որը որպես թագաժառանգ տիրում էր Աղծեփին։ Այդ պատճառով նրան կոչում էին Գեորգի Աղծեփելի։ Թեոդոսը թագավորեց քսանյոթ տարի։

Քառասունութերորդ թագավոր Դավիթ կյուրապաղատ Բագրատունին[56]՝ Բագրատ կյուրապաղատի որդին

Իսկ այս Դավիթ կյուրապաղատին թշնամացավ Նասրը՝ Գվարամ իշխանի որդին, որն այս Դավթի հորեղբայրն էր։

Գվարամի որդի Նասրը և Գուրգենն ափխազաց կողմն էին, իսկ Դավիթն ու Լիպարիտն օգնում էին հայերին, որոնք ափխազների հետ միասին կռվում էին[57] Քարթլիի համար։ Այդ ժամանակ Գվարամը վանական դարձավ։

Իսկ այս Դավիթ կյուրապաղատը շինեց Խախուլի եկեղեցին։

Եվ երբ մահացավ Կախեթի քորեպիսկոպոս Գարրիել Դոնաուրին, քորեպիսկոպոս դարձավ Փադլ Արևմանելին[58], որն իմաստուն և գործիմաց այր էր։

Այդ ժամանակ Գվարամի որդի Նասրը խաբեությամբ (իր մոտ կանչելով) սպանեց Բագրատի որդի Դավթին՝ իր հորեղբորորդուն։

Քրոնիկոնի 101-րդ տարին էր (881 թ.) և (Դավիթը) թողեց Ատներսեհ անվամբ որդի, որը թագավոր դարձավ իր հորից հետո։[5-]։

Քրոնիկոնի 86-րդ տարում (866 թ.) վախճանվեց Աշոտ Մեծի թոռ Աշոտ Կեկելը՝ Ատներսեհի որդին։

Քրոնիկոնի 109-րդ տարում (889 թ.) վախճանվեց Աշոտ Մեծի թոռ՝ Սմբատ մամփալ Արտանուջելին՝ Աշոտ Կեկելի եղբայրը և Ատներսեհի որդին։ Քրոնիկոնի 163-րդ տարում (943 թ.) վախճանվեց այս Սմբատի որդի վանական դարձած Դավիթ մամփալը։

Քրոնիկոնի 208-րդ տարում (988 թ.) վախճանվեց Դավիթ մամփալ վանականի որդի Սմբատ էրիսթավաց-էրիսթավը (իշխանաց իշխանը) և թողեց երկու որդի՝ Դավիթ և Բագրատ։

Քրոնիկոնի 208-րդ տարում (988 թ.), այսինքն նույն տարում, երբ մահացավ նրա հայր Սմբատը, վախճանվեց Բագրատը՝ Սմբատի որդին և Դավթի եղբայրը, թողնելով երկու որդի՝ Գուրգեն և Սմբատ։

Գուրգենը թողեց մի որդի Դեմետրե անունով, իսկ Սմբատը՝ մի որդի Բագրատ անունով։

Քրոնիկոնի 111-րդ տարում (891 թ.) վախճանվեց Աշոտ Մեծի թոռ Գուր-

զեն կյուրապաղատը՝ Սմբատ մամփալ Արտանուջելու եղբայրը և Ատներսեհի որդին։

Քրոնիկոնի 138-րդ տարում (918 թ.) վախճանվեց Գուրգեն կյուրապաղատի որդի Աշոտ Կուխը, որը շինել էր Տբեթի եպիսկոպոսարանը[50]։

Քրոնիկոնի 116-րդ տարում (896 թ.) վախճանվեց Գուրգեն կյուրապաղատի որդի Ատներսեհ էրիսթավաց-էրիսթավը՝ Աշոտ Կուխի եղբայրը, թողնելով երկու որդի՝ Դավիթ էրիսթավաց-էրիսթավին և Գուրգեն էրիսթավաց-էրիսթավին։

Քրոնիկոնի 161-րդ տարում (941 թ.) վախճանվեց Դավիթ էրիսթավի եղբայր Գուրգեն էրիսթավաց-էրիսթավը։

Քրոնիկոնի 129-րդ տարում (909 թ.) վախճանվեց Ատներսեհի թոռ Բագրատ մամփալ Արտանուջելին՝ Սմբատ մամփալ անթիպատոս Արտանուջելու որդին և Դավիթ մամփալ վանականի եղբայրը։

Քրոնիկոնի 165-րդ տարում (945 թ.) վախճանվեց Բագրատ մամփալ Արտանուջելու որդին՝ նախկինում Ատներսեհ կոչեցյալը և (վանական անվամբ) Բասիլը։

Քրոնիկոնի 159-րդ տարում (939 թ.) վախճանվեց Բագրատ մամփալ Արտանուջելու որդի Աշոտը, Ատներսեհ վանականի եղբայրը։

Քրոնիկոնի 128-րդ տարում (908 թ.) վախճանվեց Բագրատ մամփալ Արտանուջելու որդի Դավիթ էրիսթավաց-էրիսթավը և նախկինում Ատներսեհ կոչեցյալ Բասիլիի եղբայրը։

Քրոնիկոնի 143-րդ տարում (923 թ.) վախճանվեց Բագրատ մամփալ Արտանուջելու որդի Գուրգեն էրիսթավը՝ այս Դավիթ էրիսթավաց-էրիսթավի եղբայրը։

Քրոնիկոնի 188-րդ տարում (968 թ.) վախճանվեց Բագրատ մամփալ Արտանուջելու թոռ Գուրգենը՝ Գուրգեն էրիսթավի որդին։

Իսկ մենք սկսենք սկզբնական պատմությունն այն Դավիթ կյուրապաղատի, որին սպանեց Գվարամ մամփալի որդի Նասրը՝ իր հորեղբորորդին։

Իսկ Նասրին սկսեցին թշնամանալ հայերը, Լիպարիտը և վրացիներն ու Աշոտի եղբայր Դավիթը, նաև սրանց հետ էին սարակինոսները։ Հարձակվեցին Նասրի վրա և փախուստի մատնեցին ու խլեցին բերդերը։ Մեկնեց (Նասրը) Հունաստան՝ հունաց արքայի մոտ[51]։

Եվ մահացավ Աշոտի որդի Գվարամը, թաղեցին Օպիզայի (վանքում), որը նա վերաշինել էր։

Քառասունիններորդ թագավոր Ատներսեհ Բագրատունին՝ թագավոր-կյուրապաղատ Դավթի որդին

Եվ վրաց թագավոր բազմեցրին Դավիթ կյուրապաղատի որդի Ատներսեհին։ Իսկ այս Ատներսեհը իր թագավորության օրոք կառուցեց Բանան[52]՝ Կյուրիկե Բանելու գլխավորությամբ, որը դարձավ առաջին Բանելի եպիսկոպոսը։

Իսկ ափխազաց թագավոր Դեմետրեի որդի Բագրատը[53] գտնվում էր Հունաստանում՝ Կոստանդնուպոլսում, որին հունաց արքան զորք տվեց և ծովով ուղարկեց Ափխազաց երկիրը. (Բագրատը) սպանեց Հովհանի որդի Ատներսեհին և գրավեց Ափխազաց երկիրը։ Եվ կնության առավ նրա (Ատներսեհի) կնոջը՝ Գվարամի դստերը, ապա ափխազաց թագավոր Բագրատը Հունաստանից վերադարձրեց իր կնոջ եղբայր Նասրին, տալով նրան իր զորքը։ Իսկ Նասրը՝ Սամցխեում[54] գրավեց երեք բերդ՝ Օձրխեն[55], Ջվարիսցիխեն[56] և Լոմսիանթան[57], որոնք նույնպես Գվարամն էր կառուցել։

Եկան Դավթի որդիներ Գուրգենը և Ատներսեհը, օգնեցին հայերը, բախվեցին Կուրի ափին, հաղթվեցին ափխազները, սպանեցին Նասրին և օսերի իշխան Բաղաթարին ու ափխազաց էրիսթավին։

Իսկ Փադլա քորեպիսկոպոսը հզորացավ ու հպատակեցրեց դարդարանցիներին և նրանից հետո քորեպիսկոպոս դարձավ Կյուրիկեն[58], և Քարթլիին տիրում էին ազնաուրները։

Այդ ժամանակ եկավ ափխազաց թագավոր Կոստանդինը[69], գրավեց Քարթլին, և նրան թշնամացավ հայոց արքա Սմբատ Տիեզերակալը[70], արշավեց մեծ զորքով, մոտեցավ Ուփլիսցիխեին և, թամբերը գարսելով մեկը մյուսի վրա, հնարամտությամբ գրավեցին բերդը։ Ապա սիրահոժար խնամիացան Սմբատն ու Կոստանդինը և վերադարձրեց (Սմբատը) Ուփլիսցիխեն ու բովանդակ Քարթլին[71]։

Այս դեպքերից հետո (Քարթլի) եկավ հագարացիների ամիրան՝ Աբու-Սաջի որդի Աբուլ-Կասիմը[72], որին ուղարկել էր ամիրա Մումնան։ Այնպիսի մեծ զորքով, որը երկրում չէր տեղավորվում։ Նախ զալով Սոմխեթ, ավերեց ամբողջ երկիրը՝ Սյունիքը, Վայոց ձորը և Վասպուրականը։ Եվ հայոց արքա Սմբատը նրա ահից չկարողացավ մնալ տեղում, փախավ ու պատսպարվեց ափխազաց լեռներում, ուր և մնում էր։

Եվ եկավ Տփղիս Աբու-Սաջիի որդին (Աբուլ-Կասիմը), որտեղ այդ ժամանակ ամիրա էր Ալիի որդի Ջաֆարը[74]։ Եկավ ու պաշարեց Ուջարման։ Ներսում կար երեք հարյուր մարդ, որոնք բազում օրեր մարտնչեցին։ Եվ երբ տեսան, որ չեն կարող դիմադրել, գիշերով փախուստի դիմեցին։ Ոմանք փախան, ոմանց էլ հասան և կոտորեցին։ Եվ երբ Բոճորմայի բերդականներն իմացան Ուջարմայի գրավման մասին, թողեցին բերդն ու փախան։ Եվ երբ եկան ու գտան այն մարդաթափ եղած՝ ասացին. «Փարախի ներսում կատաղի դիմադրում էին, իսկ բերդը թողեցին անտերունչ»։ (Արարները) գրավեցին Բոճորման իր բերդով, իսկ Ուջարմայի պարիսպները քանդեցին։

Իսկ քորեպիսկոպոս Կյուրիկեն տեսնելով իր անզորությունը, ապավինեց երդմանը, գնաց տեսության (Աբուլ-Կասիմին), և նա հարցրեց. «Մի՞վ ստիպեց քեզ այստեղ գալ»։ Նա պատասխանեց. «Ստիպեց մայրս»։ Եվ (Աբուլ-Կասիմը) ասաց. «Ոչ ոքի չեմ վշտացնի»։ Եվ սիրաշահեց նրան (քորեպիսկոպոսին) իր առաքինության համար և աղատ արձակեց, բայց Բոճորման իրեն պահեց։

Այնուհետև (Աբուլ-Կասիմը) ներխուժեց Քարթլի ու ավերեց, իսկ մինչ նրա ներխուժելը, ավերել էին Ուփլիսցիխեի պարիսպները, որպեսզի այնտեղ (արաբները) չհիմնավորվեն։ Այնտեղից անցավ Սամցխե և ավերեց Սամցխեն ու Ջավախքը, պաշարեց Թմոգվի (Թմկա) բերդը։ Եվ տեսնելով բերդի անառիկությունն ու ամրությունը, հեռացավ այնտեղից, եկավ Ղվելի (բերդը)՝ շրջապատելով այն, սկսեց գրոհել։

Բերդում էր գտնվում մի (պատանի) Գոբրոն անվամբ, որը մարտնչում էր (թշնամու դեմ) ամեն օր, իր հասակակիցների հետ։ Եվ երբ գրավեցին այդ բերդը, բռնեցին սուրբ Գոբրոնին և նահատակեցին նրան, որի մարտիրոսությունն ընդարձակ նկարագրեց մեր սուրբ հայր Ստեփանոս Մտբեվարի եպիսկոպոսը[75]։

Եկավ (Աբուլ-Կասիմը) այնտեղից և գնաց Դվին քաղաք։ Եկան և հայտնեցին նրան, թե Սմբատ արքան ամրացել է Կապոետ[76] բերդում։ (Այնուհետև Աբուլ-Կասիմը) շտապ շարժվեց և հրամայեց իր զորքին, որպեսզի որևէ մարդու, որին ողջ գտնեն, բերեն իր մոտ։ Եկավ և պաշարեց Կապոետ բերդը և բերդականների կանանց ու երեխաներին, որոնք գտնվում էին բերդից դուրս, գերեց։ Այդ իսկ պատճառով բերդը անձնատուր եղավ, Սմբատին գերի վերցրին, տարան Դվին, կախաղան հանեցին և այդպես մահացավ։

Այնուհետև, մի քանի տարի անց, և երբ շենացավ երկիրը, այն ժամանակ Կյուրիկե քորեպիսկոպոսն օգնության կանչեց ափխազաց թագավոր Կոստանդինին, անցան Հերեթ և պաշարեցին Վեժինի բերդը[77]։ Ափխազաց թագավորը շրջապատեց վերին, իսկ Կյուրիկեն՝ ստորին կողմից։ Եվ երբ ձեռնամուխ եղան բերդի գրավմանը, այնժամ եկավ պատրիկ Ատրներսեհը[78] և Ավագ ուրբաթին հաշտության պայմաններ գրեց։ Ափխազաց թագավորին հանձնեց Արիշի, Գավազնի (ամրոցները), իսկ Կյուրիկեին՝ Օրճոբի (ամրոցը)։ Եվ հաշտություն կնքելուց հետո՝ վերադարձին ափխազաց թագավոր Կոստանդինը եկավ ու երկրպագեց Աշավերդի տաճարում սուրբ Գեորգիին և ոսկով զարդարեց նրա պատկերը։ Իսկ նրա մեծաքանակ զորքին Կյուրիկե քոր-

եպիսկոպոսը ճանապարհեց մեծապես պատվելով և վերադարձավ իր երկիրը։

Սակավ-ինչ անց, վախճանվեց ափխազաց թագավոր Կոստանդինը, և Ափխազաց երկիրը որոշ ժամանակ պառակտվեց։ Քանզի Կոստանդին թագավորն ուներ երկու որդի. մեկը՝ ավագ որդին և մյուսը՝ կրտսերը, որը ծնվել էր երկրորդ կնոջից։ Ավագ որդու անունն էր Գեորգի, իսկ կրտսերինը՝ Բագրատ[79]։ Եվ նրանց միջև կատաղի պայքար էր մղվում՝ այնպես որ մեկը մյուսի մահացու թշնամին էր դարձել։

Իսկ այս Բագրատը Գուրգեն էրիսթավաց-էրիսթավի[80] փեսան էր, որին Գուրգենն օգնում էր իր ողջ զորությամբ։ Միայն Բագրատի մահից հետո խաղաղություն հաստատվեց։ Եվ նրա մահից հետո ողջ ափխազաց թագավորությունն անցավ Գեորգի թագավորին։

Նա կատարյալ էր ամենայն բարեմասնությամբ, քաջությամբ և հաղթ մարմնով, աստվածապաշտ էր, ամենից առավել եկեղեցիներ կառուցող, աղքատներին ողորմացող, առատաձեռն և հեզ ու ամենայն լարությամբ և առաքինությամբ լեցուն։ Սա կարգ ու կանոն սահմանեց իր հայրենիքում և թագավորությունում։ Նա կառուցեց Ճղոնդիղիի[81] տաճարը, դարձրեց եպիսկոպոսարան, այն ճոխացնելով սուրբ մարտիրոսների բաղում մասունքներով։

Այն ժամանակ վախճանվեց Կյուրիկե քորեպիսկոպոսը, և քորեպիսկոպոս դարձավ Կյուրիկեի որդի Փաղլան[82]։ Սա կառուցեց Լոծոբանի բերդը։ Այդ նույն ժամանակ ներխուժեցին սաբակինոսները, որոնց կոչում էին Սաջյաններ, ավերեցին Կախեթը, այրեցին Մցխեթան և Ջվարի (վանքը) ու հեռացան, հետները (գերի) վարելով ջարդված պատվական խաչը։ Եվ բոնկվեց որովայնացավ ու ասում էին, թե տառապեցին խաչի պատճառով։ Հավաքեցին (խաչի) մասերը, վերադարձրին Ջվարիին և տեղադրելով խաչկալի մեջ, կանգնեցրին իր տեղում։

Եվ Հերեթում ի սկզբանե՝ մինչ Իշխանիկի[83] թագավորելը, բոլորը հերետիկոսներ էին, իսկ Իշխանիկը Գուրգեն էրիսթավաց-էրիսթավի քեռորդին էր, և նրա մայր Դինար թագուհին[84] (նրանց) դարձի բերեց ուղղափառության։ Եվ այդ ժամանակ Սալարյանները գրավեցին Պարտավն ու Ատրպատականը։

Իսկ ափխազաց թագավոր Գեորգին Քարթլին տվեց իր ավագ որդի Կոստանտինին։

Այն ժամանակ՝ քրոնիկոնի 143-րդ տարում (923 թ.), վախճանվել էր Ատրներսեհ թագավորը[85]։

Քրոնիկոնի 174-րդ տարում (954 թ.) վախճանվեց Ատրներսեհ թագավորի որդի Աշոտ կյուրապաղատը[88]։

Քրոնիկոնի 157-րդ տարում (937 թ.) վախճանվեց Աշոտ կյուրապաղատի եղբայր Դավիթ թագավորը[87]։

Քրոնիկոնի 165-րդ տարում (945 թ.) վախճանվեց սրանց եղբայր, Ատրներսեհ թագավորի որդի Բագրատ Մագիստրոս կյուրապաղատը։

Քրոնիկոնի 181-րդ տարում (961 թ.) վախճանվեց այս Բագրատի որդի Ատներսեհ կյուրապաղատը[88]։

Քրոնիկոնի 189-րդ տարում (969 թ.) վախճանվեց Ատներսեհ կյուրապաղատի որդի Բագրատը։

Քրոնիկոնի 186-րդ տարում (966 թ.) վախճանվեց այս Բագրատի եղբայր Դավիթ էրիսթավաց-էրիսթավը։

Քրոնիկոնի 178-րդ տարում (958 թ.) վախճանվեց Սմբատ թագավոր-կյուրապաղատը՝ Ատներսեհ թագավորի որդին ու Դավիթ թագավորի եղբայրը և թողեց երկու որդի՝ Բագրատ Խեին[89], որն իր հորից հետո թագավոր դարձավ, իսկ Ատներսեհը՝ կյուրապաղատ։

Քրոնիկոնի 203-րդ տարում (983 թ.) վախճանվեց Ատներսեհ կյուրապաղատը։

Քրոնիկոնի 221-րդ տարում (1001 թ.) վախճանվեց Ատներսեհի որդի առաքինությամբ լեցուն Դավիթ Մեծ կյուրապաղատը[90], որի պատմությունը ստորև կպարզաբանվի։

Քրոնիկոնի 214-րդ տարում (994 թ.) վախճանվեց Դավիթ կյուրապաղատի հորեղբայր և Սմբատ թագավոր-կյուրապաղատի որդի Բագրատ Խե թագավորը։

Քրոնիկոնի 212-րդ տարում (992 թ.) վախճանվերց Բագրատ Խև թագավորի որդի Սմբատը, չթողնելով ժառանգ։

Ափիազաց թագավորի որդի Քարթլիի հիսուներորդ թագավոր Կոստանդինը

Երեք տարի անց սկսեց (Կոստանդինը) թշնամանալ իր հոր[91] հետ գահին տիրելու համար։ Եվ երբ հայտնի դարձավ նրա մտադրությունը, նա (Կոստանդինը) պատսպարվեց Ուփլիսցիխե բերդի մեջ և նրա հետ էին տբեթացիք և այլ բաղում ազնաուրներ։

Իսկ Գեորգի թագավորը, երբ համոզվեց, որ իր որդին (ապստամբել է), արշավեց իր ողջ հզորությամբ, հետը բերելով Տայքի թագավորին և Փաղլա քորեպիսկոպոսին և պաշարեցին Ուփլիսցիխեն։ Երբեմն գրոհում էին հեծելազորով, երբեմն՝ հետևակով, բայց բերդին, ուր բաղում մարդ էր պատսպարվել, ոչ մի վնաս չհասցրին։

Այնժամ Գեորգի թագավորը Սազուերելի ազնաուրների միջոցով ապրսպրրեց հետևյալ կերպ. «Դուրս եկ, քեզ կտանենք Ափխազաց երկիրը. դու կթագավորես, և հայրդ կմնա (առանց գահի)»։ Նա հավատաց և վստահեց, սակայն, նրա մոտ գտնվող ազնաուրներն ընդդիմանում էին. նա չանսաց նրանց, գիշերը լաստանավով դուրս եկավ Կուր գետը, և երբ հասավ Կուր գետի (հանդիպակաց) ափը, չկարողանալով այլևս համբերել, հարձակվեցին նրան բռնելու։ Եվ երբ կռահեց նրանց նենգությունը, փորձեց լաստերով հետ դառնալ ափից, որպեսզի նորից բերդը մտնի։ Սակայն չկարողացավ լաստերը տեղաշարժել, շրամույն եղավ այնտեղ, որտեղ լաստանավերը խրվել էին։ Աղմուկ բարձրացավ, դուրս եկավ թագավորը՝ ամբողջ զորքով հանդերձ։ Նրանք շրջապատեցին բերդը։ Եվ երբ լուսացավ, սկսեցին որոնել։ Իսկ նա դուրս էր եկել ջրից և թաքնվել էր ժայռերի արանքում։ Նրան գտավ մի անհավատարիմ մարդ, բռնեցին և բերեցին թագավորի մոտ, որը նրան խիստ պատժեց. նախ աչքերը խարանեցին և հետո ամորձատեցին, և (Կոստանդինը) մահացավ։ Բերդի մեջ գտնվող ազնաուրներին ապահովեցնելով դուրս բերեց, տբեթացիներին խաղաղությամբ ճանապարհեց (թագավորը) և նրանք գնացին Վասպուրական[92]։

Վախճանվեց Փաղլա քորեպիսկոպոսը և քորեպիսկոպոսի (գահին) նստեց Կյուրիկեն[93]։ Սրանից հետո ապստամբեցին գարդաբանցի ազնաուրները, սկսեցին բանակցել Գեորգի թագավորի հետ։ Արշավանքի ելավ Գեորգի թագավորը և ներխուժեց Կախեթ, հրի ու սրի մատնելով այն, վերադարձավ իր երկիրը։ Դարձյալ եկավ Ատենի։ Նրա որդի Լևոնը[94] Քարթլիի էրիսթավն էր, և նորից ամբողջ զորքը ուղարկեց Կախեթ։ Երբ իմացավ Կյուրիկեն, որ չի կարող դիմակայել, ելավ նրանց ընդառաջ։ Եվ խորամանկությամբ ուզեց նորից փախչել, (սակայն) նրան բռնեց (Լևոնը), շարժվեց Կախեթ, որպեսզի գերի վերցնի նրա կնոջն ու երեխաներին։ Սակայն նրանք փախուստի դիմեցին, քանի որ Քարթլիի ազնաուրները նրանց այս մասին տեղյակ էին պահել։

Գեորգի թագավորին միացավ Կյուրիկե քորեպիսկոպոսի եղբայր Շուրտան և իր հետ բերեց Ուջարմա բերդի (բանալիները)։ Եվ տիրեցին Կախեթի այլ բերդերին, բացի երեք՝ Նախճավան, Բոճորմա և Լոծոբան բերդերից։

Լոծոբանին տիրում էր Արշիի որդի Իվանեն, որը պատսպարվեց այնտեղ, դավաճանելով տիրոջը։ Կառուցեցին Շուրիս-ցիխե (բերդը), ուր և զորք տեղադրեցին։ Իսկ այն ժամանակ Մարանի բերդին դարձյալ տիրում էր Արշիի որդի և Իվանեի եղբայր Խախուան, որը կամենում էր իր եղբոր պես զենքով պաշտպանել այն։ Եկավ թագավորը, հրամայեց զորքին գրոհել։ Սակայն նրանք գրավեցին (բերդը) հնարամտությամբ, կալանված խախուային բերեցին թագավորի մոտ, թագավորը բանտարկեց նրան և աքսորեց Ջիքեթ։

Նախճավան բերդին տիրում էր Կյուրիկեի որդի Փադլան։ Նա էլ ամրացյավ այնտեղ։ Տեսնելով իր անզորությունը՝ Կյուրիկե քորեպիսկոպոսը խընդրեց երաշխիք, որ իրեն ողջ կթողնեն, և Կախեթը զիջեց Գեորգի թագավորին։ Իսկ արքայորդի Լևոնը չէր կամենում ազատ արձակել Կյուրիկեին, քանզի առաջին անգամ էլ նա դեմ էր դրան, սակայն հայրը չանսաց նրան։ Կյուրիկեն պայման դրեց, որպեսզի ձմռանը չգրավեն Բոճորմա բերդը և որ ղատկից հետո իրավունք տան գնալու։ Նրա խնդրանքը բավարարեցին։ Այդ պատճառով վերցնելով Նախճավան բերդը և որպես պատանդ՝ կրտսեր որդի Դավթին. (Կյուրիկեին) բաց թողեցին լուսարարության օրը։

Թագավորը մեկնեց Ափխազաց երկիր, իսկ Կյուրիկեն Բոճորմա մտավ, պատրաստվում և կամենում էր Ջատկից հետո գնալ։ Այնժամ դավ նյութեցին վրաց ազնաուրները և նրանց հետ կախեթցիներ Գոդերձի Մգդեուրին, Մամա (Հայր) Ղանչաելին, Դաշի Կորինթելին, Դաշի և Իվանե Սիվիլոսելիները, եղբայրներ Սարա և Գրիգոր Փխուենելիները, և նրանց հետ հիսուն այլ ազնաուրներ ու զորավիգ եզան Կյուրիկեին։ Սկսեցին դրոհել բերդերի վրա և կարճ ժամանակ անց գրավեցին այդ բոլորը, ավերեցին Շուրիս-ցիխե ու Լոծոբան բերդերը և նորից Կյուրիկեն իր հայրենիքին տիրեց։

Եկան և Գեորգի թագավորին հայտնեցին Կախեթի կորստի մասին։ Հույժ տրտմեց և մեղադրեց բոլոր նրանց, ովքեր օժանդակել էին Կյուրիկե քորեպիսկոպոսին ազատ արձակելուն։ Եվ երբ ձմեռն անցավ, դարձյալ զորք ուղարկեց՝ իր որդի Լևոնի հրամանատարությամբ։ Ներխուժեց և հրո ճարակ դարձրեց Կախեթը և այդ արշավանքի ընթացքում ստացան մեծ ու աստվածասեր Գեորգի թագավորի մահվան բոթը։ Այնժամ Լևոնը կանչեց Կյուրիկե քորեպիսկոպոսին. նրանք, որոնց ուղեկցում էին մեկական հեծյալ, հանդիպեցին Բազալեթ լճի ափին, բանակցեցին մեկ օր, մինչև որ (Լևոնը) նրան հայտնեց իր հոր մահը։ Սեր տածելով նրա նկատմամբ, խոստացավ (Կյուրիկեի) որդուն իր փեսան դարձնել։ Լսելով այդ, Կյուրիկեն ցատկեց ձիուց և երկրպագելով շնորհակալություն հայտնեց, ուրախացավ հաշտության և սիրո, առավել ևս խնամիության առաջարկության համար։

Վերադարձավ Լևոնը և տիրեց իր հայրենիքին ու թագավորությանը, բանի որ նույն ժամանակ էլ (նա) մտավ Ափխազաց երկիրը։ Եվ հզորացրեց տերը Լևոնի թագավորությունը հար և նման իր հորը։ Նա ևս աստվածասեր էր և առլեցուն ամենայն առաքինությամբ։ Նա շինեց Մոքվիի եկեղեցին ու դարձրեց եպիսկոպոսական աթոռ, օրհնեց և շնորհեց ամենայն բարիք։ Եվ երբ տիրեց իր հայրենիքին, ի կատար ածեց Կյուրիկե քորեպիսկոպոսին տված խոստումը՝ իր դստերը կնության տվեց նրա որդուն։ Մի որոշ ժամանակ անց վախճանվեց Լևոնի դուստրը։

Վերստին սկսեց թշնամանալ Կյուրիկեին և Կախեթը նվաճելու նպատակով արշավեց մեծ զորքով, իջավ Արագվի (գետի) ափը, ավերեց Մուխնարը, Խերկը և Բազալեթը և նույն արշավանքի ընթացքում հիվանդացավ, նահանջեց ու մեռավ։

Նրանից հետո գահին նստեց Լևոնի եղբայր Դեմետրեն[95] և տիրեց Քարթլիին։ Եվ մինչ կկարգավորեր իր թագավորությունը, այդ ընթացքում անցավ որոշ ժամանակ։ (Երբ) նրա եղբայր Թեոդոսը գտնվում էր Հունաստանում, այս երկրի որոշ մարդիկ հրահրեցին (Թեոդոսին) իր եղբոր դեմ։ Քանի որ ափխազաց Գեորգի Մեծ թագավորի կենդանության օրոք նրա երկու որդիներ Թեոդոսն ու Բագրատն ուղարկվել էին Հունաստան՝ այնտեղ դաստիարակվելու, որպեսզի հետագայում, իր մահից հետո, նրանց միջև տեղի չունենա երկպառակություն և պայքար։

Եկավ Թեոդոսը Հունաստանից, հասավ Սամցխե, կանգ առավ Մարգիս Մերե (ավանում), իր մոտ էր կոչում մեսխերի ազնաուրներին, զորք էր ժողովում և կամենում էր բազկի ուժով նվաճել իր հայրենիքը։ Իսկ Դեմետրե թագավորը ուղարկեց իր զորքը. հանկարծակի հարձակվեցին և փախուստի մատնեցին Թեոդոսին։ (Նա) եկավ Քարթլի և գնաց մթավար Ատրներսեհ

Ջամելու մոտ. տարան նրան Ջամի բերդ, այնտեղից հետամուտ էր լինում իր նպատակին։

Այնժամ Դեմետրե թագավորն ուղարկեց իր զորքը, պաշարեցին Ջամի բերդը, և մարտնչում էին շուրջ երեք ամիս։ Բերդից այս կողմ (գտնվողներին) մեծապես վնասում էին։ Եվ երբ բերդականների վիճակը անտանելի դարձավ, խնդրեցին տալ երդում և երաշխիք, որ կթուլատրեն Թեոդոսին խաղաղությամբ հեռանալ։ Նրանք վստահեցրին ու խաղաղությամբ ճանապարհեցին (Թեոդոսին)։ Նա գնաց Դավիթ կյուրապաղատի մոտ, որտեղ և մնաց մեկ տարի։

Իսկ այս Դավիթ կյուրապաղատը այն էր, որը մահացել էր քրոնիկոնի 221-րդ տարում (1001 թ.), որի մասին վերը խոսել ենք։ Սա Ատրներսեհ կյուրապաղատի որդին և Սմբատ թագավոր-կյուրապաղատի թոռն էր՝ Բագրատունիներից։

Դարձյալ ելավ Տայքից (Թեոդոսը), անցավ Կախեթ։ Այնժամ Դեմետրե թագավորը պատվիրակներ ուղարկեց Թեոդոսի և Կյուրիկե քորեպիսկոպոսի մոտ՝ պատգամով. «Քանզի եկել է իմ եղբայրը Հունաստանից, որպեսզի մարդկանց սադրանքով չշարունակվի պայքարը մեր միջև, արդ, եկ քո միջնորդությամբ վստահիր եղբորս ինձ, թող լինենք երկուսս էլ հավասար տեր մեր հայրենիքի, ինչպես էինք ես և Լեոնը, առ ինձանից երաշխիք ու միջնորդներ, և քեզանից մեծապես շնորհակալ կլինեմ այդ արարքի համար»։ Դեմետրե թագավորի առաջարկին տեղեկանալով, Կյուրիկե քորեպիսկոպոսը կանչեց Թեոդոսին, հաղորդեց (Դեմետրեի) երաշխիքը և ասաց. «Ես կլինեմ քո արյան վրեժխնդիրը»։ Եվ Թեոդոսին վստահելով իր եղբորը, ուղարկեց (նրա մոտ)։

Այնժամ տարան նրան (Թեոդոսին) երդումով և երաշխիքով. երդումը տվեցին Սվետի Ցխովելիի առջև կաթողիկոսը, վարդապետները և բոլոր դիդեբուլները։

Գալով իր եղբոր մոտ, Թեոդոսը մնաց այնտեղ մի որոշ ժամանակ։ Իսկ Դեմետրե թագավորը մոռացության տալով աստծո և մարդկանց միջնորդությունը, մտադրվեց երդմնազանց լինել. կալանավորեց Թեոդոսին և խարանեց աչքերը։ Այս տեսնելով, նրա երկրի բնակիչները սկսեցին որոնել նրանց եղբորը, որին կոչում էին Ջալա-Մեփե (գահ բարձրացնելու նպատակով), սակայն չկարողացան այդ անել, քանզի Դեմետրե թագավորը քաջ էր և զորեղ։ Եվ երբ Դեմետրե թագավորը վախճանվեց, ու բոլոր երկրացիները տեսան, որ Ափխազաց և Քարթլիի (թագավորը) այլևս չթողեց գահաժառանգ, Թեոդոսին ազատելով՝ գահ բարձրացրին։

Այնժամ եկան կախերը և պաշարեցին Ուփլիսցիխեն։ Այդ ժամանակ Քարթլիի էրիսթավն էր զորեղ և բազում զորք ունեցող Մարուշի որդի Իվանեն։ Սա պատվիրակներ ուղարկեց Դավիթ կյուրապաղատի մոտ, հորդորելով (նրան), որպեսզի արշավի իր զորքով, նվաճի Քարթլին. կամ իրեն պահի, կամ շնորհի Գուրգենի որդի Բագրատին[96]՝ ափխազաց թագավոր Գեորգիի դստեր որդուն, որին մոր կողմից հասնում էր Ափխազաց երկիրը և Քարթլին։ Այդպես էլ Մարուշի որդի Իվանեն էր կամենում Բագրատին գահ բարձրացնել։ Իրազեկ դառնալով Մարուշի որդի Իվանեի ցանկությանը, Դավիթ կյուրապաղատն իր ողջ զորքով մտավ Քարթլի։ Եվ իմանալով նրա՝ Դավթի, գալստյան մասին, կախերը փախուստի դիմեցին՝ նրանց թողնելով Քարթլին։

Եկավ Դավիթ կյուրապաղատը և կանգ առավ Քվախվրելիում. նրան ներկայացավ Քարթլիի էրիսթավ Մարուշի որդի Իվանեն, վերցրեց (Իվանեից) Ուփլիսցիխեն, այն շնորհեց Բագրատին և նրա հայր Գուրգենին, քանի որ ինքը ժառանգ չուներ և որդեգրել էր Գուրգենի որդի Բագրատին։

Տայքի բոլոր թագավորներից առավել հզորացավ այս Դավիթ կյուրապաղատը։

Այդ ընթացքում հունաց թագավորի[97] դեմ ապստամբել էր Սկլիրոսը[98] և գրավել էր ողջ ցամաքային կողմը, թագավորներին և թագուհուն պաշարել էր քաղաքում (Կոստանդնուպոլսում), մեծ նեղություն պատճառելով նը-

բանց։ Լինելով այդ վիճակում, խորհեցին այսպես. «Դավիթ կյուրապաղատիյ զատ, մեզ ոչ ոք զորավիգ չի կարող լինել»։ Գրեցին նամակ և հղեցին Թոռնիկն Քարթվելուն[99], որը գտնվում էր Սուրբ լեռան մեծ մայրավանք Մեծն Աթանասիոսի վանքում՝ Դավիթ կյուրապաղատի մոտ, խնդրելով, որ սատարի իրենց։

Այս տեսնելով, կյուրապաղատը հույժ ուրախացավ և ընդունեց հունաց արքայի նամակները ու Թոռնիկեին իրազեկ դարձրեց ողջ իրողությանը։ Խորհրդակցեցին Հունաստան զորք ուղարկելու և սպասալար նշանակեցին Թոռնիկեին։ Իսկ Թոռնիկեն կյուրապաղատի և նրա նամակները (տարավ) հանձնեց հունաց արքային և տեղեկացրեց կյուրապաղատի ցանկությանը։ Եվ այնժամ հունաց արքան Հունաստանի վերին երկրները շնորհեց կյուրապաղատին ի տիրություն՝ իր կենդանության օրոք[100]։

Եվ որպես պատանդ Դավիթ կյուրապաղատից պահանջեց ազնվաուրների որդիներին, ու (Դավիթը) տվեց արքայորդիներին որպես պատանդ։ Դարձյալ պահանջեց. կնոջ եղբայր՝ հայր Իոանեի որդուն՝ Եփթիմիոսին, ուղարկեցին հունաց արքայի մոտ։ Իմանալով այս, Իոանեն, իր կամքից անկախ, հայտնվեց և մեկնեց մայրաքաղաք (Կոստանդնուպոլիս)։ Եվ քանի որ թագավորները ճանաչում էին Աբուհարբին, որը հայր Իոանեի անունն էր, Իոանեին ևս մեծ սեր ցույց տվին և լավ ընդունեցին։ Այնուհետև, երկարատև վեճ տեղի ունեցավ Իոանեի և իր անունոջ միջև՝ Եփթիմոսի համար։ Քանզի չէր կամենում նրան տալ, և խիստ մեղադրեց նրան Իոանեն, այսպես ասելով. «Ի՞նչ է այս։ Մի՞թե դուք որդի չունեք։ Արդյոք պարզ չէ, թե ում եք դուք որպես ձեր որդիների կարեկցում, իսկ իմ որդուն որբի պես զոհ բերեցիք որպես պատանդ. մի՞թե Տերը ձեզ կների»։ Եվ այսպես աստծո կամքով և թագավորների որոշմամբ տարավ իր որդուն և նորից վերադարձավ Օլիմպոս։

Իսկ Թոռնիկեն գրեց կյուրապաղատին. «Գիտենք, որ աստված զորավիգ է քեզ, մի՛ դավաճանիր։ Եվ երբ աստծո հովանավորությամբ մեր բոլոր թշնամիներին գերես, ողջ ավարը քոնը թող լինի»։

Այդ իսկ պատճառով կյուրապաղատը տվեց տասներկու հազար ընտիր հեծյալներ և Քրիստոսի օգնությամբ փախուստի մատնեց Սկլիրոսին, որը փախավ մինչև Պարսկաստան։ Այնուհետև, թագավորների հրամանով վերադարձավ և գերեց Հունաստանի բոլոր մեծամեծերին ու նրանց ողջ ինչքն ավարի առավ, որի մի մասը բաժանեց զորքին, իսկ թանկարժեք և մեծ մասը պահեց իրեն. ոսկի, արծաթ, գործվածքներ ոսկեհյուս և այլն այսպիսիք։ Եվ վերադառնալով, ողջունեց կյուրապաղատին և մեծապես սիրաշահեց։

Քանզի նախ աստվածասեր և աղքատներին ողորմացող, հեզ ու մեծահոգի էր, եկեղեցիներ շինող, բարի, առատաձեռն, մարդասեր և վանականներին պատվող, յուրաքանչյուրի համար բարեգործ և ամենայն առաքինությամբ օժտված էր (Դավիթ կյուրապաղատը)։ Սա կառուցեց աստծո վանք և աստծո գահ՝ Խախուլի սուրբ եկեղեցին։

Եվ երբ վերադարձավ այնտեղից, թողեց Ուփլիսցիխեում Գուրգենին և նրա որդի Բագրատին։ Այդ ժամանակ դեռևս Բագրատը անչափահաս էր, այդ իսկ պատճառով որպես գահակից թողեց հորը՝ Գուրգենին։ Ժողովեց վրաց ազնվաուրներին և հրամայեց. «Սա Տայքի, Քարթլիի և Ափխազաց երկրի գահաժառանգն է, իմ որդին և սանը, և ես եմ սրա խնամակալն ու սատարը, սրան հպատակվեք բոլորդ»։ Եվ որոշ ժամանակ մնալով, գնաց Տայք։

Հիսունմեկերորդ թագավոր արքայից–արքա Գուրգենի որդի Բագրատ Բագրատունին

Երբ անցավ որոշ ժամանակ, սկսեցին վերստին դավեր նյութել և խորամանկությամբ, ինչպես այդ բնորոշ է Քարթլիի ազնվաուրներին. դավադրության մեջ մտնելով նաքուրդեվելիների և սաբոտարելների հետ, զորք բերեցին Կախեթից, հանձնեցին Ուփլիսցիխեն, ձերբակալեցին Գուրգենին, նրա որդի Բագրատին և Գուրանդուխտ թագուհուն ու տարան Կախեթ։

Երբ այս իմացավ Դավիթ կյուրապաղատը, հույժ տրտմեց, արշավեց իր ողջ զորքով, եկավ Թռեզք՝ կախեթ անցնելու (նպատակով). կախերն այդ իմանալով, հղեցին պատվիրակներ և դաշն կնքեցին. ազատ արձակեցին Գուրգենին, Բագրատին և Գուրանդուխտ թագուհուն, վերադարձրին Քարթլին և Ուփլիսցիխեն, իսկ Միրքուալի և Գրուի բերդերը պահեցին իրենց։ Այդ ժամանակ Ուփլիսցիխեն և Քարթլին Գուրանդուխտ թագուհուն էին պատկանում։ Գուրանդուխտ թագուհին ափխազաց թագավոր Գեորգիի դուստրն էր և Բագրատի մայրը։

Այդ ընթացքում անցավ երեք տարի, և Ափխազաց երկրում թագավորում էր Թեոդոս Մծուխարեն (Կույրը)։

Քայքայվեց այդ երկիրը և խաթարվեց նախորդ թագավորների կողմից սահմանված կարգ ու կանոնը։ Տեսնելով (այդ), նրա երկրի երևելիները, բոլորն անխտիր հույժ վշտացան։

Նույն Մարուշի որդի Իվանեն կամեցավ Ափխազաց աշխարհի թագավոր դարձնել Բագրատին։ Նրա հետ Ափխազաց երկրի և Քարթլիի բոլոր մեծամեծերը, էրիսթավներն ու ազնվաուրները խնդրեցին Դավիթ կյուրապաղատին տալ Բագրատին իրենց թագավոր։ Իսկ նա ստիպված, մեծ դժկամությամբ կատարեց նրանց խնդրանքը՝ ինչպես նախապես ասացինք, ժառանգ չուներ Դավիթ կյուրապաղատը և Բագրատին որդեգրել էր որպես Տայքի երկու կողմերի[101] թագաժառանգ։ Սակայն քանզի անժառանգ էր մնացել Քարթլիի և Ափխազաց երկիրը, նրանց տվեց (Բագրատին)՝ երաշխիք և պատանդ (վերցնելով նրանցից)։

Բերին նրան (Բագրատին) Ափխազաց երկիր, օծեցին թագավոր և բոլորը հպատակվեցին նրա հրամանին՝ քանզի չափահաս էր դարձել։ Եվ երբ այդ ընթացքում անցավ երկու տարի, սկսեց կառավարել, ձեռնամուխ եղավ կարգավորելու ամեն մի գործ իր պապի՝ Գեորգի մեծ թագավորի նման, գեռ ավելին՝ քանի որ ամեն ինչով նմանվում էր իր դաստիարակին՝ մեծ թագավոր Դավիթ կյուրապաղատին։ Ակներև էին նրա բարության բոլոր գործերը։ Ուղարկեց Թեոդոսե թագավորին՝ իր մորեղբորը, Տայք՝ Դավիթ կյուրապաղատի մոտ, ավելի բարվոք համարելով այն, որ յուրաքանչյուր մարդ, մեծ թե փոքր, բարի գործի համար հույս, իսկ չարագործության համար վախ ունենա։

Այս բոլորից հետո նա անցավ Քարթլի, որպեսզի կարգավորի Քարթլիի խառնաշփոթ կացությունը։ Եկավ և կանգ առավ Թիղուայում։ Իսկ այդ ժամանակ Քարթլի ազնվաուրները, որոնցից յուրաքանչյուրն առանձին էր տնօրինում Քարթլիի գործերը, թեև Գուրանդուխտի հպատակության ներքո էին, դժգոհ էին նրա գալուց։

Քավթար Տբելու առաջնորդությամբ (նրանք) ընդառաջ ելան մարտնչելու և կանգ առան Մողրիի սահմանագլխին։ Ափխազաց թագավոր Բագրատն (այդ) տեսնելով, ոտքի հանեց իր զորքը, գնացին և մարտնչեցին։ Փախուստի մատնեցին քարթվելներին. ոմանց կոտորեցին, ոմանց գերի վերցրին, իսկ այլք փախան և ցիր ու ցան եղան։ (Բագրատը) եկավ Ուփլիսցիխե, վերցրեց բերդն իր մորից, մնաց մի քանի օր և փոքր ինչ կարգի բերեց դրությունը Քարթլիում, ապա մեկնեց Ափխազաց երկիր, հետը վերցնելով իր մորը։ Եվ որպես հմուտ նավավար կարգավորեց Ափխազաց երկրի գործերը, քանզի որևէ մեկի չնչին անհնազանդությունը տեսնելիս նրա տեղն իր համախոհին և հավատարմին էր նշանակում։

Եվ այդ ընթացքում անցավ մի քանի տարի։ Այն ժամանակ Կլդեկարիի էրիսթավն էր Ռատը և տիրում էր Ատենի բերդին ու Քարթլիի այն մասին, որ ընկած էր գետից հարավ. Թռեղքին, Մանգլեաց փորին և Սկվիրեթին։ (Ռատը) կամովին չէր հնազանդվում Բագրատ թագավորին։

Բագրատ թագավորը ծածուկ ժողովեց իր ողջ զորքը և մտավ Քարթլի, կամենալով բռնել էրիսթավ Ռատին։ Այնժամ իսկույն հայտնեցին Դավիթ կյուրապաղատին, ամբաստանելով հետևյալ կերպ. «Ուրիշ այլ տեղ չի գնալու, այլ քո մահն է փնտրում»։ Եվ պատրաստվել էր Գուրգենը՝ Բագրատի հայրը, գնալու իր որդու (Դավթի) մոտ։ Իսկ Դավիթ կյուրապաղատը շտապ

եկավ, հավաքեց իր զորքը և իրազեկ դարձրեց հայոց բոլոր թագավորներին։ Այն ժամանակ դեռևս ողջ էր Բագրատի պապը՝ վրաց թագավոր Բագրատը։ Նա ևս եկավ Դավիթ կյուրապաղատի մոտ, քանզի երկյուղ էր կրում, որ իր որդին՝ Գուրգենը, իրենից կխլի թագավորությունը։ Մեծ զորքով եկան և կանգ առան Դլիվում. զորքն անհամար էր, և զորքն ուղարկեց Գուրգենի դեմ։ Ելան Գուրգենին ընդառաջ և կռվի բռնվեցին Գարդաթխրիլում՝ Շավշեթի սահմանագլխին, փախուստի մատնեցին Գուրգենին, (որը) մազապուրծ եղած պատսպարվեց Ծեփթիսցիխեում։

Այն ժամանակ Բագրատը եկել էր Թռեղք, կանգ առել Կարուշեթում։ Ուղարկեց պատվիրակներ, զորատես կատարեց և տեսավ, որ ուժով չի կարող դիմակայել Դավիթ կյուրապաղատին։ Այնժամ թողնելով իր զորքը տեղում, ինքը միայնակ գնաց նրա (Դավիթ կյուրապաղատի) մոտ, ներում հայցեց և ասաց հետևյալը. «Ուրիշ այլ նպատակով չեմ եկել, քան Ռատի անհնազանդության պատճառով։ Իսկ նա ճանապարհեց և հրամայեց. «Ասացին ինձ.., թե ելել էիր իմ մահը փնտրելու, սակայն այժմ իմացա հավաստի, որ դու անմեղ ես։ Այլևս արտոնում եմ քեզ Ռատին հնազանդեցնել, ինչպես ինքդ կամենաս»։

Այնժամ բերկրանքով լի վերադարձավ Ափխազաց երկիր, որպեսզի Ռատին կասկածի տեղիք չտա և անակնկալ հարձակվելով հանկարծակիի բերի նրան։ Երբ ձմեռը հասավ (Բագրատը) իր ողջ զորքով եկավ և մոտեցավ Կլդեկարի բերդին։ Տեսնելով այս, Ռատն ընդառաջ ելավ, վերցնելով իր հետ որդուն՝ Լիպարիտին, աղերսեց (գթություն) ափխազաց թագավոր Բագրատից և իր բերդը տվեց նրան, ինքն իր հայրենիքում՝ Արգվեթ (գավառում) մնաց։

Իսկ այս ընթացքում վախճանվել էր մեծ կյուրապաղատ Դավիթը, ինչպես վերն ասացինք։ Դավիթը մահացավ անժառանգ։

Եվ Հայնկույս Տայքն ավերվեց, ու եկավ հունաց արքա Վասիլը, որին Դավթի աղնաուրները հանձնեցին բերդերը, և արքա Վասիլը նվաճեց Դավիթ կյուրապաղատի հայրենիքը։

Եվ գնացին նրա մոտ ափխազաց թագավոր Բագրատը և նրա հայր Գուրգենը ու Վասիլ արքան մեծարելով, Գուրգենին շնորհեց մագիստրոսություն, իսկ Բագրատին՝ կյուրապաղատություն, որպեսզի դրանով իսկ թշնամացնի միմյանց հորն և որդուն ու այդպես սադրեց։ Սակայն Գուրգենը ճըշմարտասեր և ուղղամիտ էր, և նրա հոգին չխռովվեց խարդավանքից ու չդիմեց որևէ նենգության։

Այնուհետև, մի քանի տարի անց, քրոնիկոնի 228-րդ տարում (1008 թ.) վախճանվեց արքա Խև Բագրատի որդի արքայից-արքա Գուրգենը՝ Բագրատ Թագավորի հայրը։

Դարձյալ որոշ ժամանակ անց, և ինչպես նախապես ասացինք, բարելավեց և կարգավորեց Ափխազաց երկրի բոլոր գործերը. անհնազանդներին շնորհազրկեց և նրանց տեղը կարգեց իր կամքին հավատարիմ և ծառայամիտ հնազանդներին։ Եվ իր կառավարմամբ գերազանցեց ափխազաց ու Քարթլիի բոլոր թագավորներին։ Եվ բյուրապատկեց իր զորքն առավել, քան երբևիցե։

Արշավեց (Բագրատը) իր ողջ զորքով, եկավ Քարթլի, պատվիրակներ ուղարկեց Կախեթ, պահանջեց Քարթլիի այն բերդերը, որ նրանք գրավել էին։ Այն ժամանակ (Կախեթում) քորեպիսկոպոս էր Դավիթը[102]։ Սակայն նա չկամեցավ հանձնել բերդերը, այլ տվեց հետևյալ պատասխանը. «Եթե կամենում ես բերդերը վերցնել, ապա մեր մեջ այդ կորոշեն հավատարիմ բազուկը և պատերազմը։ Իսկ ես կդիմավորեմ քեզ Քսանի գետի վրա»։

Զայրացավ Բագրատը՝ ափխազաց և վրաց թագավորը։ Իսկ կյուրապաղատը այնժամ գտնվում էր Դլիվում, որովհետև կարգավորում էր Տայքի և Քարթլիի գործերը, քանի որ այն ժամանակ, իր հոր՝ արքայից արքա Գուրգենի մահից հետո ինքն էր տիրում Տայքին։ Շտապ սուրհանդակ ուղարկեց, կանչեց ափխազաց և վրաց զորքը, իսկ ինքը շարժվեց վերին (Քարթլիի)

ողոբով, անցավ Թռեղքը և Մցխեթի կամուրջը։ Նրան միացան ափխազները և վրացիները։ Կանգ առավ Թիանեթում, սկսեց ասպատակել Կախեթը։ Եվ չկարողացավ դիմակայել Դավիթը, քանի որ (Բագրատի) զորքն անհամար էր, սկսեց պաշարել բերդերը, և այդ ժամանակ նվաճեց Հերեթ երկիրը, իշխան կարգեց Աբուլալին և հետ դարձավ։

Եվ նույն ժամանակ, երբ ափխազաց Բագրատ թագավորը հեռացավ, նորից հերեթցիներն անջատվեցին և միացան Դավթին, որը գրավեց Հերեթը։ Փոքր-ինչ անց (Դավիթը) մահացավ։ Դարձյալ ելավ Բագրատն իր ողջ զորքով, կրկին նվաճեց Հերեթը։ Դինար թագուհուն (ի կնություն) առևանգեց, ձգտելով գրավել Կախեթը և իր անհամար զորքով երկու տարում գրավեց Կախեթի բոլոր բերդերը, Կյուրիկեին[103] շրջափակեց Բոճորմայում, բերդը պաշարեց մոտ մեկ տարի, գրավեց Բոճորման։ Եվ ամբողջ Հերեթն ու ամբողջ Կախեթը գրավեց, Կյուրիկեին գերեց և պահեց իր պալատում։

Այն ժամանակ հզորացավ Փադլունը՝[104] Գանձակի ամիրան, սկսեց հաճախակի նեղել Հերեթի և Կախեթի էրիսթավներին, ժամանակ առ ժամանակ ավազակաբար և գաղտագողի տեղ-տեղ ասպատակելով և գերեվարելով։ Իսկ Բագրատ մեծ արքան տեսնելով նրա հանդգնությունը, խիստ զայրացավ և լցվեց վրեժխնդրությամբ։ Պատրաստվեց իր ողջ զորքով, պատվիրակ ուղարկեց Գագիկ շահնշահ[105] հայոց թագավորի մոտ, խնդրելով, որ վրիժառու լինի Փադլունից։ Իսկ Գագիկը մեծապես ուրախացավ, շտապ կանչեց իր ողջ զորքը և գնաց ափխազաց թագավոր Բագրատի մոտ։ Երկուսն էլ եկան Զորակերտ[106], գնացին խիստ ամբարտավան դարձած Փադլունի՝ քրիստոնյաներին ատողի դեմ, որն ըստ ամենայնի ձգտում էր ոչնչացնել խաչի երկրպագուներին։ Եվ երբ (Փադլունը) տեսավ նրանց հզոր ուժը, վախեցավ, հեռացավ և գնաց ամրոցները՝ պատսպարվելու։

Մեծ և ամեն գործով փառաբանված Բագրատ արքան գերեվարեց Ռանի (Առան) երկիրը, պաշարեց Շամքոր քաղաքը, տեղադրեց քարանետ գործիքները, մի քանի օրից ավերեց Շամքորի պարիսպները։ Հաջորդ օրը մտադիր էր ավարի և գերեվարության մատնել քաղաքը։ Նույն գիշերը Փադլունը պատվիրակ ուղարկեց և ներում խնդրեց, խոստանալով իր ողջ կյանքի ընթացքում ծառայել, տվեց խարաջ և պարտավորվեց անձամբ արշավել (Բագրատ III-ի) թշնամիների դեմ։ Այնժամ (Բագրատ III-ը) հրամայեց և ժողովեց բոլոր գիղեբուլներին իր մոտ. նախ հրամայեց, որ այն քաղաքը գրավեն իրենց ուժով։ Խորհուրդ արեցին, խորհեցին և ասացին, որ ոչ ոք ի վիճակի չէ (այդ կատարել)։ Առավել ևս այն պատճառով, որ ռազմական այլ գործերով զբաղված լինելով՝ ժամանակ չունեին։

Դարձյալ հրամայեց և մտադրվեց դաշն կնքել Փադլունի հետ։ Եվ նրանցից յուրաքանչյուրն իր (իմաստությամբ) դատելով՝ լավագույնը համարեց դաշինքը։ Հրամայեց և ուղարկեց պատվիրակ, որի միջոցով հայտնեց հավաստի դաշն ընդունելու մասին։ Այնժամ Փադլունը մեծապես ուրախացավ, կատարեց իր բոլոր տված խոստումները. նվերներ շնորհեց մեծ ու անհամար, բոլոր դիղեբուլներին անհամար ընծաներ շնորհեց, և հաղթանակած (Բագրատ III-ը) վերադարձավ[107]։

Այս թագավորության օրոք էր ապրում մեր սուրբ հայր Եփթիմեոս Վրացին, մեր վրաց գրքերի թարգմանիչը։ Այս նույն մեծ արքան շինեց Բեդիայի կաթողիկե եկեղեցին և այն դարձրեց եպիսկոպոսարան, այնտեղ փոխադրելով Գուդաղվայի եպիսկոպոսությունը։ Շնորհեց բազում գյուղեր տարբեր ձորերով ու այլ վայրերով հանդերձ, սահմանեց կանոնադրություն ըստ ամենայնի, զանազան հանդերձանքով ճոխացրեց եկեղեցին, օրհնեց և կարգեց եպիսկոպոս։ Եթե որևէ մեկը կամենում է տեսնել և համոզվել նրա վեհության մեջ, նախ թող տեսնի Բեդիայի կաթողիկե եկեղեցու սյասները և դրանով համոզվի, որ Վրաց և Ափխազաց երկրում չի եղել նրա նման մի այլ թագավոր։

Նա ինքն օրհնեց նաև Քութաթիսի եկեղեցին, մեծ և անզուգական կանոններ շնորհելով։ Ժողովեց բոլոր մերձակա իշխաններին և կաթողիկոս-

ներին[108], վարդապետներին ու բոլոր վանքերի վանահայրերին, Վերին և Ներքին երկրների դիդերուլներին, որոնք գտնվում էին իր հայրենիքում ու տիրույթում և այլ իշխանություններում։

Իսկ այս արքա Բագրատ կյուրապաղատը նվաճեց ամբողջ Կովկասն ինքնակալությամբ՝ Ջիքեթից մինչև Գուրգանի (Վրկանա) ծովը, Ատրպատականը և Շիրվանը, Սոմխիթի թագավորներով հանդերձ հարկատու դարձրեց։ Իր իմաստությամբ և հզորությամբ, առավել իր արքունիքով՝ պարսից արքային բարեկամ և հավատարիմ դարձրեց, նաև հունաց արքան էր մեծապես երկյուղ կրում նրանից։

Վրաց և ափխազաց թագավոր Բագրատը գերազանցեց բոլոր միապետներին իր ամբողջ տիրակալությամբ։ Սրան հպատակվեցին և հնազանդվեցին բոլոր իշխողները, նրա թագավորության հայրենատերերն ու իշխանները՝ որպես հավատարիմ զորականներ։ Եվ աստված նրա հպատակը դարձրեց իր բոլոր թշնամիներին և հակառակորդներին, նրա օրոք խաղաղություն և մեծ անդորը շնորհեց երկրին։ Եվ եթե որևէ մեկը կամենա հիշատակել նրա ողջ գործերն առանձին-առանձին, ապա ուժերը չեն բավարարի, ուստի մասամբ կհիշատակեմ ժամանակի ընթացքում մոռացության չտալու համար։

Եվ այս էլ ասենք, որ Վախտանգ Գորգասալ մեծ արքայից հետո նրա նման մեծազոր և իմաստուն ոչ ոք չի եղել, եկեղեցիներ կառուցող, աղքատներին ողորմացող և արդարադատ էր յուրաքանչյուրի նկատմամբ։

Վախճանվեց կաթողիկոս Սիմեոնը, և արքան կաթողիկոս-պատրիարք կարգեց մեծատոհմիկներից մեկին՝ իր մերձավոր և հոգեզավակ Մելքիսեդեկին։ Իսկ այս սուրբ թագավորը մեկնեց Կոստանդնուպոլիս՝ հունաց Վասիլ արքայի մոտ, օժանդակություն խնդրելու համար։ Քանի որ կաթողիկե առաքելոց մեծ եկեղեցի Ավետի Ցխովելին, որը կառուցել էր Վախտանգ Գորգասալը, խարխլվել էր և ժամանակի ընթացքում սյունազարդ կամարներն ու գավիթը փլվել էին, և ոչ ոք ի վիճակի չէր վերակառուցելու և չուներ կարողություն այդ անելու։ Գնաց և հայտնեց նրան վրաց անզորությունը և իր խնդրանքը։

Այնժամ Վասիլ արքան շնորհեց Կեստորիա վանքը, որն ուներ ՃԵ (105) գյուղ, գանձ և եկեղեցիների զարդեր, սրբապատկերներ ու խաչեր, քահանայապետական և քահանայական հանդերձանք։ Վերադարձավ և եկավ իր երկիր Քարթլի և թագավորանիստ Մցխեթա քաղաք։ Եվ սկսեց գավիթն ու արտաքին սյունազարդ կամարները վերականգնել, տանիքը ծածկել, ամեն ինչը իր ավարտին հասցրեց։ Աստված արժանացրեց Մցխեթա քաղաքի նորոգմանը և կաթողիկե առաքելական մեծ եկեղեցին՝ ըստ ամենայնի զարդարեց ոսկով և արծաթով, ակներով ու մարգարիտներով, դրվագեց Ավետի Ցխովելին ոսկով և արծաթով, դրվագեց սուրբ բեմը ոսկով ու արծաթով, մեծագին քարերով ու մարգարիտով, դրվագեց միջնորմը և աղոթարանի մուտքը ոսկով ու արծաթով, ակներով և մարգարիտներով կերտեց սուրբ մարտիրոսարանը, զարդարեց կենարար երկու խաչը ակներով ու մարգարիտներով, բոլոր սրբերի բազում մասունքներին հանգստություն տվեց և կենարար մի այլ խաչ ևս զարդարեց, դրվագեց և զարդարեց ակներով ու մարգարիտով, ոսկով և արծաթով թվով հիսունհինգ սրբապատկեր, քսանհինգ գիրք, դրվագած և առանց դրվագելու գրել տվեց ու շնորհեց (եկեղեցուն)։

Բայց այս էլ ասենք, թե Բագրատունի քանի թագավորների և կյուրապաղատների մասին խոսեցինք վերը, որոնցից ոմանք թագավորել էին Քարթլիում և ոմանք Սամցխե-Տայքում, մինչ այս Բագրատի գահ բարձրանալը։ Եվ երբ թագավոր դարձավ, արդեն ոմանք վախճանվել էին և ոմանք էլ սրա օրոք մահացան։ Սրա ժամանակ ուրիշ Բագրատունի այլևս չկար, բացի Բագրատ Արտանուջելու որդիներ Սմբատից և իր եղբայր Գուրգենից, որոնք թագավորում էին Կղարջքում և որոնց մահը վերը նկարագրեցինք։

Սմբատի մահը տեղի ունեցավ քրոնիկոնի 231-րդ (1011 թ.) տարում։

Նրա եղբայր Գուրգենի մահը տեղի ունեցավ քրոնիկոնի 232-րդ (1012 թ.) տարում։

Այսպես եղավ նրանց վախճանը՝ այն ժամանակ, երբ Բագրատ արքա նյուրապաղատը Փանասկերտ բերդը տեսակցության կանչեց այս երկու եղբայրներին՝ Կղարջքի թագավորներ Սմբատին և Դուրգենին՝ Բագրատ Արտանուջելու որդիներին, այդտեղ էլ կալանավորեց և գրավեց նրանց բերդերն ու քաղաքները, բանտարկված լինելով Թմոգվի բերդում հենց այնտեղ էլ վախճանվեցին Սմբատը և Դուրգենը։

Իսկ Դուրգենի որդի Դեմետրեն և Սմբատի որդի Բագրատը գնացին Կոստանդնուպոլիս՝ Վասիլ արքայի մոտ։ Նաև նրանց որդիները՝ Կղարջքի արքայազնները, որոնք մնացել էին այդ երկրում, բոլորը մահացան բանտարկության մեջ։

Այնուհետև Բագրատ թագավորը շրջեց իր ողջ թագավորությունում՝ Ափխազաց աշխարհում, Հերեթում և Կախեթում, եկավ և ձմեռեց Տայոց գավառներում, և երբ վրա հասավ ամառը, եկավ Փանասկերտ բերդը երրորդ տարում և այնտեղ վախճանվեց այս Բագրատ արքան։

Թագավորեց երեսունվեց տարի և վախճանվեց ծերունազարդ հասակում՝ քրոնիկոնի երկու հարյուր երեսունչորսերորդ (տարում) (1014 թ.) մայիսի յոթին, ուրբաթ օրը։ Եվ իր մահվան օրը Տայքում էր գտնվում։ Եվ նրա աճյունը Ջվիադ էրիսթավաց-էրիսթավը բերեց ու թաղեց Բեդիայում։

Նրանից հետո թագավոր դարձավ նրա որդի Գեորգին։ Նա ևս առլեցուն էր ամենայն առաքինությամբ։

(շարունակելի)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ավատատիրական հասարակության բարձր խավի ներկայացուցիչ, իշխող հարստության պարագլուխ, տեղական լիիրավ իշխան։

2 Ստեփանոսի որդին, Քարթլիի էրիսթավար (մոտ. 668—718 թթ.)։ Աղբյուրներում հորջորջվում է նաև որպես «թագավոր»։

3 Հին Վրաստանի պատմական ավանդության համաձայն Միրիան III-ից՝ բյուզանդական կայսր Կոստանդին Մեծի (306—337 թթ.) և հայոց արքա Տրդատի (287—330 թթ.) ժամանակից սկսած վրաց թագավորները ներկայացվում են որպես իրանական Խոսրովյանների հետնորդներ։

4 Ափխազաց թագավորության հիմնական մասը։ Այն առաջացել է Լազական թագավորության անկումից հետո՝ I դարում։ VIII դ. վերջերից եգերքը գտնվել է ափխազաց թագավորների իշխանության ներքո։

5 Հայկական աղբյուրներում՝ «Բլուշան»։

6 Այդ ճանապարհն Աղվանքի և Քարթլիի բնակչության փոխառնչությունների առումով կարևոր նշանակություն ուներ։

7 Խազարները Քարթլին ավերել են 764 թ., իսկ Ջվանշերին և Շուշանին գերել են 761 թ. (ხაზართველოს ისტორიის ნარკვევები, ტ. II, თბ., 1973, გვ. 292—293).

8 Արդեն Սելջուկյանների դեպի Անդրկովկաս կատարած արշավանքների ժամանակաշրջանում Դարիալի լեռնանցքը («Ալանաց դուռ») մեծ դեր է խաղացել Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի ժողովուրդների փոխհարաբերություններում, ինչպես նաև Հյուսիսային Կովկասը կապում էր Մերձավոր արևելքի հետ (Г. Г. Мкртумян, Грузинское феодальное княжество Кахети в VIII—XI вв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983, с. 33—34).

9 Գերությունից Ջվանշերը վերադարձել է 771 թ.։

10 Խոսքը վերաբերում է իրանական Խոսրովյաններին (Г. В. Цулая, նշվ. աշխ., էջ 80, ծան. 5)։

11 Նկատի ունի Վախտանգ Գորգասալին (մոտ V դ. 40-ական թվականներ —502 թ.)։

12 Անդրկովկասում Արաբական խալիֆաթի տիրապետությունը համեմատաբար կայուն բնույթ ստացավ էմիր և զորավար Մրվան իբն-Մուհամմեդ II-ի (744—755 թթ.) օրոք, որն ավերիչ ասպատակություն կատարեց դեպի Հայաստան ու Վրաստան։ VIII դ. 30-ական թվականներին կազմավորվում է Տփղիսի էմիրությունը։

13 Նկատի ունի «Արմինիա» փոխարքայության ոստիկան Եղիդ իբն-Ուսայդ աս-Սուլամին (752—765 թթ.), որը, հավանաբար, երկյուղ կրելով խաղարական ասպատակություններից՝ Ալանաց աշխարհի կողմից ծավալեց ռազմական գործողություններ։

14 Զինվորական, դատական և քաղաքացիական իշխանություն կրող անձ, որն իր տնօրինության ներքո գտնվող ավատատիրական տիրույթներում հանդիսանում էր փոխարքա։ Նշանակում է նաև աշխարհագրի գլուխ, զորապետ։

15 Խոսքը վերաբերում է Ափխազիայում իշխող Լևոն II-ին (758—798 թթ.), որ բյուզանդական կայսր Լևոն IV-ի (775—780 թթ.) զարմիկն էր և անվանապես կախում ուներ կայսրությունից։ Սակայն, օգտվելով կայսրության զգալի թուլացումից և հենվելով խազարների օժանդակության վրա, 787 թ. իրեն հռչակեց «ափխազաց թագավոր» (Г. Г. Мкртумян, նշվ. աշխ., էջ 76—77)։

16 Նկատի ունի Ատրներսեհ Բագրատունուն՝ Աշոտ I կյուրապաղատի հորը (786—826/836 թթ.)։

17 Որոշ գրչագրերում այս հատվածին փոխարինում է Սմբատ Բագրատունու «ժամանակագրությունից» վերցրած տեքստը (§ 28)։

18 Տվյալ դեպքում տարեգիրը թույլ է տվել ժամանակագրական ակնհայտ վրիպում, IX դ. սկզբին վերագրելով մեծ մասամբ զորավար Մասլամայի (725—729 թթ.) գլխավորությամբ VIII դ. առաջին քառորդում արաբների ձեռնարկած արշավանքները, երբ վերջիններս ավելի ու ավելի էին մոտենում կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսին (М. Д. Лордкипанидзе, նշվ. աշխ., էջ 66, ծան. 21)։

19 Ճեղային ավագանուց էին սերում Կախեթում իշխող առաջին քորեպիսկոպոս Գրիգորը (782—827 թթ.) և նրա հետնորդները, որոնք զարձան նոր պետական միավորման իշխողները (Г. Г. Мкртумян, նշվ. աշխ., էջ 72)։

20 Նկատի ունի ափխազաց թագավոր Թեոդոս II-ին (798—825 թթ.)։

21 Վրացերեն «ՃՇՏՅ» (մթա՝ «լեռ») բառից։ Հյուսիսային Կովկասի լեռնաբնակ ազգագրական խմբերի հավաքական անվանումն է։

22 Դարիալի կիրճի (Ալանաց դուռ) մոտ և Թերեք գետի շրջանում (այժմ՝ ՎԽՍՀ Կաղբեկի շրջան) հնում ապրած ցեղ, Ծանարքի (Ծանարաց աշխարհի, ըստ արաբ. աղբյուրների՝ Սանարիայի) հիմնական բնակիչները։

23 Կուր գետի ձախ վտակը. հոսում է Մցխեթի և Կասպիի միջև գտնվող Քսանի գյուղի մոտով։

24 Խոսքն արաբ նշանավոր զորավար Խալիլ իբն Յազիդ աշ-Շայբանիի (829—832 թթ.) մասին է, որը կառավարել է խալիֆ ալ-Մամունի (813—833 թթ.) օրոք։

25 Աշոտ I կյուրապաղատի մահվան ստույգ տարեթիվը հայտնի չէ։ Հետազոտողներն այն գնում են 826—836 թթ. միջև։

26 Նկատի ունի Տփղիսի էմիր Ալի իբն Շուարին (829—830 և 833 թթ.)։

27 Խոսքը Կախեթի կառավարիչ Դաշի (827—839 թթ.), ավելի ստույգ՝ Վաշեի մասին է։

28 Խոսքը վերաբերում է Կախեթի քորեպիսկոպոսին, որն իշխել է 839—861 թթ.։

29 Ներկայիս Ախալսոփելի գյուղն Ալաղանի ձախ ափին, Ղվարելի բնակավայրից հարավ-արևելք։

30 Իշխել է 833—853 թթ.։

31 Այս տեղեկությունները համահնչուն են Ստեփանոս Տարոնեցու (XI դ.) վկայություններին։ Սակայն նա ի տարբերություն վրաց տարեգրի, նշում է Խալիդի դեպի Վրաստան կատարած արշավանքի տարեթիվը, ինչպես նաև այն վայրը, որտեղ նա սպանվեց, այսինքն՝ Ջավախքում գտնվող Խոզարիր գյուղը և 841 թվականը (Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, ՍՊԲ., 1885, էջ 106)։

32 Իշխել է 826—876 թթ.։

33 Գյուղ ներկայիս Գորի քաղաքի մոտ։

34 Բառացի նշանակում է «Տիրակալի բերդ»։ Անձավային ավան՝ Գորիից 10 կմ դեպի արևելք, Կուր գետի ձախ ափին։ Հին ժամանակներից ի վեր եղել է հայ գաղթականության բնակավայրերից մեկը։

35 Իր գերիշխանությունը Քարթլիի արևելյան շրջաններում հաստատելու միտումով Աբբասյանների հարստության հիմնադիր Աբու-Ջաֆարը (754—775 թթ.) եռանդուն քայլերի դիմեց։

36 Արաբական պատժիչ զորքերի հրամանատար, որը 852—855 թթ. դաժան հաշվեհարդար է անցել հայ և վրաց աղգաբնակչության հետ՝ հակաարաբական ընդվզումների պատճառով։

37 Հավանաբար նկատի ունի խալիֆ Մութավաքիլին (847—861 թթ.)։

38 Հայկական ու վրացական տարածքներն ավերելն ուղեկցվում էր Հայաստանում և Վրաստանում արաբների բնակեցմամբ։

39 Բուղայի կողմից Տփղիսի գրավման և ավերման մասին վկայում է նաև Ատենի տաճարի վրա եղած արձանագրությունը, որով հաստատվում է Տփղիսի անկման ստույգ տարեթիվը՝ 853 թ. օգոստոսի 5-ը (Христианский Восток, т. I, вып. III, СПб., 1912, с. 279).

40 Ինչպես կարծում են ուսումնասիրողները, տարեգրի վկայությունն այն մասին, թե իբր Բուղայի դեմ ելած ափխազաց թագավորի անունը եղել է Թեոդոս, հակասում է «Ափխազաց թագավորների դիվանի» տվյալներին, ըստ որոնց Թեոդոսը գահակալել է 791—818 թթ.։ Տվյալ դեպքում ուսումնասիրողներն ի տարբերություն Ի. Ջավախիշվիլու (ივ. ჯავახიშვილი. ქართველი ეგის ისტორია, წ. II. თბ., 1965, გვ. 94—95), կարծում են, որ Բուղայի Վրաստան կատարած արշավանքի տարիներին Ափխազիայի թագավորը պիտի լիներ Դեմետրե II-ը (818—854 թթ.) (З. В. Анчабадзе, Из истории средневековой Абхазии (VI—XVII вв.), Сухуми, 1959, с. 141—142).

41 Ջվարի (Սուրբ խաչ) վանքի մոտ գտնվող վայր։

42 Շրշան Վրաստանի հյուսիս-արևելքում։

43 Շրշան Արագվի գետի ակունքների մոտ։

44 Նկատի ունի Հայաստանի իշխան Սմբատ Բագրատունուն (824—855 թթ.)։

45 Աշոտ կյուրապաղատի կրտսեր որդին էր։

46 Տվյալ դեպքում՝ կրոնակից (մահմեդական)։

47 Տփղիսի էմիր Մուհամմեդ իբն Խալիդ (853—870 թթ.), Շայբանյանների տոհմից Տփղիսի էմիրների շարքում առաջինը։

48 Տփղիսի էմիր Իսա իբն աշ-Շայխ աշ-Շայբանի (կառավարել է IX դ. 70-ական թվականների սկզբներին)։

49 Սամվել Դոնաուրու մահվանից հետո (861 թ.) Կախեթի քորեպիսկոպոսության իշխանությունն անցնում է նրա եղբորը (ըստ Վախուշտիի՝ զարմիկին) Գաբրիել Դոնաուրուն (861—881 թթ.)։

50 Տփղիսի էմիր, որի կառավարման շրջանն ավարտվել է 878 թ.։

51 Տփղիսի էմիր՝ 878—882 թթ., Տփղիսի Շայբանյանների հարստության վերջին ներկայացուցիչը։

52 Ափխազաց թագավոր Գեորգի I (861—868 թթ.)։

53 Խոսքը վերաբերում է Գեորգի թագավորի եղբայր Լևոնի որդի Դեմետրեին։

54 868—881 թթ. ափխազաց գահին տիրում էին այլ հարստության՝ Շավլիանիների տան ներկայացուցիչներ Իոան (Հովնան) I-ը և Ատրներսեհ I-ը։

55 Արևմտյան Վրաստանից սերող խոշոր ավատատեր, Բաղվաշի տոհմի հիմնադիր։ IX դ. 80-ական թվականներին Թռեղքում հիմնադրեց Կլդեկարիի էրիսթավությունը։

56 Դավիթ I կյուրապաղատ Բագրատունին (876—881 թթ.)։

57 IX դ. երկրորդ կեսից մինչև նույն հարյուրամյակի 80-ական թվականները վրաց ֆեոդալական կազմավորումների միջև տեղի էր ունենում չընդհատվող պայքար։ Կռվախնձորը «Շիդա Քարթլին» («Ներքին Քարթլին») էր։ Այդ պայքարին մասնակցում էին նաև Հարավային Վրաստանի, Կախեթի, Թռեղքի խոշոր ֆեոդալները, բայց հատկապես գործուն էին ափխազաց թագավորները։

58 Կախեթի քորեպիսկոպոս Փաղլ I (881—893 թթ.)։

59 Ատրներսեհը (891—923 թթ.) 891 թ. Իրեն հռչակեց «քարթվելիների թագավոր» և դրանով իսկ հանդիսացավ վրաց Բագրատունիների հարստության առաջին թագավորը։ Ընդունելով այս տիտղոսը, նա դրսևորում էր Քարթլին ու ողջ Արևելյան Վրաստանը տիրելու և վրաց ավատատիրական համակարգում առաջատար դիրք գրավելու իր հավակնությունը։

60 Տբեթի եպիսկոպոսության թեմը գտնվում էր Շավշեթում։

61 Դրա հետևանքով նրա ժառանգական տիրույթը Գվարամի մահից հետո 882 թ. անցավ կյուրապաղատ Դավթի ժառանգներին։

62 Բերում ենք ըստ վրացերեն բնագրի՝ «Բանա». հայերեն պիտի հնչեր «Բանակ»։ Այն գտնվում է Տայքում։

63 Նկատի ունի ափխազաց թագավոր Բագրատ I-ին (881—893 թթ.)։

64 Սամցխե անվանումն առաջացել է Սամի ցիխե (վրացերեն՝ երեք քերդ) բառերի միաձուլումից։ Համարենում է մոտավորապես ներկայիս Ախալցխայի շրջանի տարածքի հետ։

65 Ներկայիս Արասթումանի բնակավայրը։

66 Ամրոց հարավ-արևմտյան Վրաստանում։

67 Ախալցխայի հին անվանումը։

68 Կախեթի քորեպիսկոպոս Կյուրիկե I (893—918 թթ.)։

69 Ափխազաց թագավոր Կոստանդին III (893—922 թթ.)։

70 Հայոց թագավոր Աշոտ I-ից հետո (890 թ.) գահ բարձրացավ նրա ավագ որդի Սմբատ I-ը (890—914 թթ.), որն իր միավորիչ անխոնջ գործունեության համար կոչվեց «Տիեզերակալ», այսինքն՝ «Աշխարհակալ»։

71 Արևելյան Վրաստանի մարզ, որը դեպի հյուսիս ձգվում էր մինչև Դարիալի կիրճը, դեպի հարավ՝ մինչև Հայաստանի հյուսիսային սահմանը, արևմուտքում այն հասնում էր մինչև Սուրամի լեռները, իսկ արևելքում՝ մինչև Կախեթ-Հերթ։ Համապատասխանում է հին հունա-հռոմեական աղբյուրների Իբերիային և հայկական աղբյուրների Վիրքին։

72 Պատմության մեջ հայտնի Սաջյաններ՝ արաբ իշխողներից մեկը՝ Յուսուֆ իբն Աբու Սաջը (901—928 թթ.)։

73 Նկատի ունի խալիֆ Մուքտադիրին (908—932 թթ.)։

74 Տփղիսի էմիր Ջաֆար իբն Ալի (909—914 թթ.)։

75 Նկատի ունի Տբեթի եպիսկոպոսին։

76 Պիտի լինի «Կապույտ բերդը», որը գտնվում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արշարունիք գավառում։

77 Աբքայից արքա Դավթի պատմիչը (Ջ. Ֆ, I, էջ 321—322) այս ամրոցը տեղակայում է Կախեթում, մինչդեռ այն գտնվում էր Հերքում՝ ըստ Կախեթի սահմանի մերձակայքում։

78 Հերքի իշխող (մոտ 906—943 թթ.)։

79 Կոստանդին III-ը առաջին ամուսնությունից (Ատրներսեհի դստեր հետ) ունեցել է Գեորգի II-ին (922—957 թթ.), իսկ երկրորդ ամուսնությունից (հայոց արքա Սմբատի դստեր հետ) ունեցել է Բագրատ II-ին։

80 Կղարջքի կառավարիչ (918—941 թթ.)։

81 Նկատի ունի Մարտվիլիի մայր տաճարը, որը գտնվում է ներկայիս շրջկենտրոն Գեգեչկորիի մոտ։

82 Կախեթի քորեպիսկոպոս Փագլուն II (918—929 թթ.)։

83 Աղվանքի իշխան Համամ Արևելցու (Բագրատունու) թոռը, Ատրներսեհի որդին, որի օրոք (մոտավորապես 943—960 թթ.) Հերքի հայ միաբնակ ազգաբնակչությունն ընդունեց երկաբնակություն։

84 Կղարջքի իշխանաց իշխան Գուրգենի (918—941 թթ.) քույրը, որը, ինչպես վկայում են աղբյուրները, վճռորոշ գեր է կատարել Հերքի ազգաբնակչության շրջանում երկաբնակություն տարածելու գործում։

85 Իշխել է 888—923 թթ.։

86 Կյուրապաղատ է դարձել 923 թ.։

87 Իշխել է 923—937 թթ.։

88 Սկսած 945 թ. եղել է մագիստրոս, իսկ 958 թ.՝ կյուրապաղատ։

89 Բագրատ Խեը իշխել է (937—994 թթ.)։

90 Նկատի ունի Տայքի կյուրապաղատ Դավիթ Մեծին (978—1000/1001 թթ.)։

91 Նրա հայրն էր ափխազաց թագավոր Գեորգի II-ը (929—957 թթ.)։

92 Ըստ մի այլ ձեռագրի՝ «Ներանք գնացին Ասփուրագան (Վասպուրական)»։

93 Կախեթի քորեպիսկոպոս Կյուրիկե II (929—976 թթ.)։

94 Ափխազաց թագավոր Լևոն III (957—967 թթ.)։

95 Նկատի ունի ափխազաց թագավոր Դեմետրե III-ին (967—975 թթ.)։

96 Ափխազաց թագավոր Թեոդոս III-ը (975—978 թթ.), որին կուրացրել էին, մահանալով որպես միակ ժառանգ թողեց քրոջը՝ Գուրանդուխտին (994—1008 թթ.), որն էրիսթավաց-էրիսթավ Գուրգենի (994—1008 թթ.) կինն էր։ Նրանց որդին՝ Բագրատ III-ը (975—1014 թթ.), 1008 թ. հռչակվեց ափխազաց և վրաց միացյալ գահի տիրակալ՝ «ափխազաց և քարթվելաց (վրաց) թագավոր» տիտղոսով։ Հետագայում նա և նրա հաջորդները դարձան Տայքի կյուրապաղատության ժառանգական տիրողներ։

97 Նկատի ունի բյուզանդական կայսր Վասիլ II Բուլղարասպանին (976—1025 թթ.)։

98 Բյուզանդական ազդեցիկ զորահրամանատար Վարդ Սկլերոսը (մահ. 999 թ.) 976 թ. խռովություն բարձրացրեց Վասիլ II-ի դեմ ու գրավեց ամբողջ Փոքր Ասիան, սակայն 979 թ. պարտություն կրեց կայսեր զորավար Վարդ Փոկասից։

99 Թոնիկն Քարթվելին սերում էր Տարոնի Զորթվանյան-Մամիկոնյան տոհմից։ Իբրև կյուրապաղատ Դավթի վասալ՝ կատարում էր կայսր Վասիլ II-ի պատասխանատու հանձնարարությունները։ Բնագրում «Քարթվելի» է կոչվում ոչ թե աղգային պատկանելության, այլ երկրանակ դավանանքին պատկանելու պատճառով։

100 Խոսքը վերաբերում է կայսրիկների նախկին տիրույթին։

101 Նկատի ունի Տայքի երկու մասերը՝ «Ցայսկոյս Տայքը» և «Ցայնկոյս Տայքը»։ Սրանք բաժանում էր Ուղթեաց գետը։

102 Խոսքը վերաբերում է Կախեթի քորեպիսկոպոս Դավթին (976—1010 թթ.), որն աղգակցական կապեր հաստատեց հայոց Տաշիր-Զորագետի Կյուրիկյանների թագավորական տան հետ։

103 Նկատի ունի Կախեթի առաջին թագավոր Կյուրիկե III-ին (1010—1038 թթ.)։

104 Փաղուն I իբն Մուհամեդ Շադգյան (985—1031 թթ.)՝ Գանձակի էմիր քրդական Շադգյան հարստությունից, որի տիրույթն անմիջականորեն սահմանակից էր Կախեթին։

105 Հայոց արքա Գագիկ I Բագրատունի (989—1010 թթ.)։

106 Վրաց աղբյուրներում Զորագետը կոչվում է «Զորակերտ», որ հետագա գրչական աղավաղում պիտի լինի։

107 Այս իրադարձությունները տեղի են ունեցել 1010—1014 թթ. ընթացքում։

108 Նկատի ունի Արևելյան Վրաստանի և Արևմտյան Վրաստանի կաթողիկոսներին։